Երկրի հեռաւորութեան մէկ 100-րդ մասը 4000 աստիճանի ջերմութիւն ունի, երկրագունդիս կարծր մասը բաղկացնող նիւթերից եւ ոչ մինը այս աստիճան ջերմութեան կարող է դիմանալ եւ չը հալուիլ, ուստի ամենակարծր մարմիններն անգամ հալուած դրութեան մէջ են, երկրիս մակերեւոյթից 36 կամ 40 մղոն խորութեան մէջ կայ այն աստիճան ջերմութիւն, որտեղ հրահալ հեղուկի մի վիճակ է տիրում եւ երկրիս ամենաներքին նիւթերն իսկ հեղուկի են փոխվում. Այս հեղուկ հուրը տարածուած է մինչեւ երկրի ճիշդ կեդրոնը եւ միակերպ ջերմութիւն կայ այն բոլոր հեղուկ զանգուածի մէջը, որ ապրիակուած է երկրի թաղանթացած կեղեւի ներքեւ:

Երկրի խորքերում պահուած այն ջերմութիւնը եւ երկրի հեղուկ վիճակն է նախնական պատճառը եր-

կրաշարժների եւ հրաբխային ժայթքումների. Մարդկային գիտութիւնը դեռ չէ կարողացել լիակատար բացատրել այս քներեւոյթները եւ շատ տեսակ տեսակ բացատրութիւններն անբաւական եղած են մինչեւ ցարդ մոքերին կատարեալ գոհացում տալ. Տրուած բացատրութիւնների մէջ ամենից ընդունելին այն է, որ երկրաշարժին պատճառ է դառնում գոլորշիների բուռն ճնշումը, որ կրում են երկրի խաւերը. Այսպէս ուրեմն, քանի որ երկրի կենտրոնը հրահալ վիճակի մէջ է գտնվում, անտարակոյս վերեւի շերտերը հեղհեղուկ սառչում են եւ հաստատուն մարմնի են փոխվում թէ այս եւ թէ այն պատճառներով, որոնց երկար կը լինի այստեղ մի առ մի բացատրել. երկրի խորքերում գոյանում են գազանագան գազեր եւ գոլորշիներ, որոնք դուրս գալու համար մի ճա-

նապաստ եւ կամ մի որ եւ է անոյք
չը գտնելով հաւաքվում են ներքին
խորութիւնների մէջ եւ ճնշում են
քրտ, մինչեւ որ երկնից հաւաքած
ուժը այնչափ է աճում, որ ամեն
արգելքների եւ ընդդիմութիւնների
յաղթելով ահեղ զօրութեամբ դուրս
են ժայթքում ճեղքուած տեղերից
եւ եթէ չը կան ճեղքուածներ, ի-
րենց ամբողջ ուժը տալով ամբողջ
ժայռերին կամ ներքեւից դէպի վեր
եւ կամ հորիզոնական կերպով, պատ-
ճառում են մեծամեծ ցնցմունքներ
եւ ահագին կորուստներ։

Ընթերցողը ուրեմն կարող է ըմ-
բռնել, թէ երկրի խորութիւն-
ների ջերմ հրահրալ վիճակն է երկ-
րաշարժի իսկական պատճառը,
ինչ էլ որ լինին տարբեր տարբեր
բացատրութիւնները, Բայց յիշելու
է, որ թէպէտ մեզ ահաբեկող եր-
կրաշարժների համար այս ներքին
ջերմութեանն են պարտական, մեր

երկրի բուսական եւ կենդանական
կեանքի համար եւս նոյն ջերմութեան
են պարտական, եթէ երկիրս սառչի
բոլորովին, թէպէտ այլեւս երկրաշարժ
չենք ունենալ, բայց ոչ եւս կունենանք
նաեւ կենսատու ջրեր, մէր արգի
մթնոլորտը եւ հետեւաբար ոչ եւս
կունենանք կեանք երկրի վերայ,
թէ բուսական եւ թէ կենդանական։

Լուսինը, որ աշխարհների մէջ
այժմ տարիքը առած մի ալեւոր ծե-
րուկ է, ինչպէս պէտք է լինի նաեւ
ժամանակին մեր երկրագունդը, չու-
նի այլ եւս հրաբուխ եւ երկրաշարժ,
որովհետեւ իր ներքին ջերմութեան
ուժերը սպառուած են, բայց չունի
նաեւ իւր վերայ որ եւ է կեանք երկ-
ջի վերայ եղած կեանքի նման։

ԲԵԹԵՌԱՅԻՆ ՅՈՒՐՏ

Աստրիացի մի գինուորական, որ բեւեռային սահմանները հետազոտելու համար ճանապարհորդել է, վերջին աստիճան ցրտութեան մարդկային կազմի վերայ գործ դրած ազդեցութիւնը ցոյց տալու համար պատմում է հետեւեալը։

Մարտ ամսուան մէջ մի օր ինքը եւ իր ընկերները բալխերով ճանապարհորդումն Սամքլարն առնամանիքի վրայով։ Այդ օրը ցուրտը դրօյից 40 աստիճան ցած էր։ Չնայած այս սաստիկ ցրտին գօրականը եւ իր հետ գանուող թիւրալցիք արեգական ծագումից առաջ ճանապարհ են ընկնում դէպի ողութիւնները անելու։ Աբեւածագը փառալից էր, ինչպէս պատահում է վերջին ծայր ցրտի ժամանակ։ արեգակը փաքրիկ արեգակներով շրջապատուած էր երեւում եւ սաստիկ ցրտի պատճառով լոյսը շլացուցիչ էր։ Ճանապարհորդները պարտաւորուած էին շարունակ շաքարօղի թափել իրենց կոկորդների մէջ առանց մետալեայ բաժակների ծայրերը իրենց շրթունքներին դիպցնելու, որովհետեւ նոցա դիպցնելը կարմրած տաք երկաթ դիպցնելու չափ վտանգաւոր էր, բայց շաքարօղին կորցրած էր իր բոլոր զօրութիւնը եւ հեղուկ վիճակը եւ իւղի պէս թանձրացել էր։ Ծխախոտ ծխելը անկարելի էր, ոբովհետեւ ծուխը բերանի մէջ սառցի կտորների էր փոխվում։ Բոլոր մետալեայ գործիքները ճիշտ շիկացած երկաթի ազդեցութիւնն ունէին մարմնի վերայ։ Աստրիացի զօրականը ասում է, թէ այսքան սաստիկ ցուրտը կամքը անդամալուծում է, եւ թէ, նորա ազդեցութեան տակ մարդիկ հոլբաճի նման անհաստատ քայլերով թոթով խօսուածքներ եւ դանդաղ մը-

տալին մի վիճակ են սահմանում։ Յուրի մի ուրիշ պղպեղասիրությունն է տանջող ծարաւը, որ յառաջ է գալիս մարմնի խոնաւութեան ցնդումից։ Աւազոտ ջարը չէ ձիւն գործածելը ծարաւը յագեցնելու համար, որովհետեւ ձիւնը կոկորդին, քիմքին եւ լեզուին բորբոքում է յաճախաւում։ Բացի սորանից ծարաւը անցկացնելու համար երբեք հնար չէ բաւական քանակութեամբ վերցնել, որովհետեւ ըրօյից 30—40 սաոիճան ցած ցրտութիւնը հալած մետաղի համէ տալիս ձեանը։ Ձիւնով ծածկուած դաշտերի միջից անցնող ճանապարհորդները շրջապատուած էին թանձր գոլորշիներով, որոնք բարձրանում էին խրնց մարմիններից։ Այս գոլորշիները սառչելով իսկ եւ իսկ փոքր բիւրեղների նման ընկնում էին գետնի վերայ զգալի ձայնով։ Մթնոլորտը թանձր, անթափանցիկ եւ մութ էր, չակատակ օդի

խոնաւութեան, անհաճոյ չորութիւն էր զգացվում։ Ամեն մի ձայն շատ հեռու էր գնում, այնպէս որ սովորական ցած խօսակցութիւնը հարիւրաւոր քայլեր հեռուից կարող էր լսուել։ Չոգաւորութիւնը եւ ճաշակը սեծապէս տկարանում է, ցրտի անդամալուծիչ ազդեցութեան ներքեւ զօրութիւնը տեղի է տալիս, աչքերը յաճախայա փակվում են եւ սառչում։ Ցուրտը թուլս մօրուքները քաց գոյնի է փոխում եւ աչքերից ու ռունդերից հիւթ է վազեցնում շարասնակ, մինչդեռ քրտինքը բոլորովին դադարում է։ Միակ հնարաւոր պաշտպանութիւնը ցրտի դէմ շատ տաք պահող հանդերձներով հագնուելն է, եւ հնար եղածի չափ աշխատել մթնոլորտի խոտութիւնը արգելել։

ԲՈՑԵՐ

Բույսերը կամ ուսնկները տարբերվում են հանքային նիւթերից իրենց կազմութեան եւ կեանքի բարձրագոյն յատկութիւններով։ Ամեն մի ուսնկ կամ բոյս անուսուի հըսկայ ծառից մինչեւ ամենափոքր ուսնկը, որը միայն մանրացոյցով կարելի է տեսնել, կազմակերպութեամբ գործարանաւոր եւ կենդանութիւն ունեցող մարմիններ են, որոնք բացի իրենց ուրիշ ամեն յատկութիւններից ճանան յատկութեամբ զանազանվում են հանքային նիւթերից, Նա եւ է հանքային նիւթ ոչ աճում է եւ ոչ մեծանում, ընդհակառակն ուսնկները եւ բոյսերը հասակով աճում են եւ մեծանումներից էլ տարածութեամբ։ Վիթխարի ուսուկ քարերը շեղջեր են՝ բաղկացած ուսուկ հատիկներից մինը միւսին յարակցուած, իսկ վիթխարի կաղնին մի

կոպին է ներսից ոճմամբ յուռթացած եւ մեծացած։

Բոյսերը երկու կարգ գործարաններ ունին, որոնց բուսաբանները իրենց լեզուով անգիոսպերմ եւ վերարտադրիչ գործարաններ են կոչում։ Անգիոսպերմներն են արմատ, կոճղ եւ տերեւներ, որոնք ըստ կարգի կերակուրը ժողովում են եւ պատրաստում։ Վերարտադրիչ գործարաններն են ծաղիկները, որոնցից ծնվում են եւ որոնց մէջ զարգանում սերմերը։

Կան մի քանի տեսակ բոյսեր էլ, ինչպէս ջրային սէզ, մամուռ եւ այլն, որոնք անծաղիկ լինելով իրենց սերմերը կամ ընձիւղները ուրիշ յատուկ գործարաններով են արտադրում։

Տուներէրի կատարած ամենակարեւոր գործողն է կերակուր պատրաստել մարդկանց եւ կենդանիների համար։ Այս նպատակի համար ծծում են հանքային նիւթեր եւ մթերա-

զուլթան պարմանալի դործողութիւններով ինչ որ ծծումբն բուսական են վերածում. Մարդիկ եւ անասուններըը չեն կարող անպրծարան նիւթերով կերակրուիլ եւ նոցանից անուռդ սառնալ բացի աղը. Հանքերը մնկերի համար յատկացեալ կերակուրներ են, որ մարսելով օդային, շաքարի եւ այլ բուսական արտադրութիւնների են վերածում, եւ մարդկանց համար անուռդին պատրաստում:

Տունկերը բացի մարդկանց եւ անասուններին համար անուռդ պատրաստելուց, ուրիշ մի կարեւոր պաշտօն էլ ունին, այն է օդը մաքրել. Մաքուր օդը երեք տեսակ գազից է բաղկացած, բորակածնից, թթուածնից եւ սակաւ ինչ համեմատութեամբ ածխային թթու.

Շնչառութեամբ շարունակ թթուածին ենք ծծում եւ արտաշնչում ածխային թթու, որ վնասակար է առողջութեան համար, այս կերպով

օդը կորցնում է իր մէջ ունեցած թթուածնի մասը եւ նոյն համեմատութեամբ վնասակար եղածը ընդունում. Կենդանիների շնչառութեան պրպիւնքն է ապականել մթնոլորտը եւ երէք առանց հակառակ գործողութեան մնար այս, մթնոլորտը այնքան վնասակար պէտք է լինէր կենդանական կեանքի համար, որչափ որ ամեն տեսակ պղծութեամբ լի գարշահոտ մի ական բացուածքից ելած գազը. Ա՛հա, այսպիսի մի ապէսային հետեւութիւն խափանում է տունկերի գործողութիւնը, որովհետեւ նոքա ածխային թթուն ծծելու եւ թթուածին արտաշնչ ելու յատկութիւն ունին. Տունկերը մթնոլորտից քաղելով ինչ որ կենդանիները հալորդում են նորան եւ ինչ որ կենդանիներին պէտք են՝ լցնում են իրենց ընդունածի վնասէն. Ա՛հա այսպիսով մթնոլորտի բաղադրիչ մասերը շարունակ պահվում են այն

համեմատութեան մէջ, որ էական է կեանքի պահպանութեան համար։

Տունկերի տեսակը եւ թիւը անհաշիւ են, մինչեւ այժմ ծանօթ եղածները հարիւր քսան հազարից աւելի են եւ տարակոյս չը կայ թէ անկաքանոնական արդի հետազոտութիւնները շատ աւելի պէտք է գտնեն։ Աբեւագարձի սահմանների մէջ տունկերը շատ աւելի ուսուած են իւրենց տեսակներով, բայց ընդ հակառակը բեւեռների մօտ նուազ են։ Այս պարագայումս մասնաւոր կերպով տեսնվում է Աստուծոյ անհուն բարերարութիւնը, որով կատարեալ պատշաճութեամբ կարգադրել է ամեն քան կլիմաների եւ կենդանական կեանքի պահանջածի համեմատ։ Տեսնում ենք, որ իւրաքանչիւր գօտի եւ մանաւանդ իւրաքանչիւր գաւառ իր մէջ ապրող կենդանիների սիրտքը յարմարութիւն ունեցող ծառեր, մացառներ եւ քանջարեղէն ունի։

ԲՆԱԿԱՆ ՉՕՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Համայն բնութիւնը լի է զօրութիւններով եւ մարդս շրջապատուած է հիասքանչ եւ հսկայական զօրութիւններով, որոնք պատրաստ են ծառայելու եւ օգտակար լինելու, բայց սոքա մարդկային կրօնավառութեամբ եւ անխոնջ աշխատասիրութեամբ միայն կարող են գործածուիլ յօգուտ մարդու։ Մարդս պէտք է իմանայ ճեւակերպել իրեն շրջապատող զօրութիւնների ներգործութիւնները որպէս զի կարողանայ նոցա իր ցանկութիւնին յարմարացնել, կարկաջասահ ապրիւրները, առուակները եւ գետերը յարիտեան պէտք է գոռան եւ նոցա վրայ հաստատուին մեծաստուած շաւաղներով պէտք է անցնեն գնան առանց որ եւ է օգ-

տակարուքեան, եթէ մարդիկ իրենց անիւները եւ մեքենաները նոցա առաջ չը դնեն վատնելով զօրուքիւնները ի մի վայր ամփոփելու եւ գործել տալու։

Եւ ացող ջրերի շոգին ամենեւին օգուտ չի կարող տալ, եթէ օդի մէջ ցնդի շարունակ, բայց մարդկային ձարտարուքիւնը եւ երկար դարերի ճգնուելից աշխատանքը կարողացել են հնարաքանչ մի զօրուքիւն դարձնել շոգին մարդկային ընկերուքեան ծառայեցնելու համար։

Ելեքտրականուքիւնը, որով լի է ամեն մի իր քնուքեան մէջ. առանց մարդկային ձարտարուքեան միայն շանթեր արձակելու պէտք է ծառայէր եւ արշաւելը, աւերելն եւ կործանումն պէտք է գործէր, բայց մարդկային հանճարը յաւիտեանակելով ամպերից ելեքտրականուքեան ուժը, հպատակեցրել է իրեն եւ մարդկուքեան անզուգական մի ծառայ է

դարձրել։ Կան նաեւ բազմատեսակ մի շարք ուրիշ զօրուքիւններ, որոնք քնուքեան մէջ միշտ պատրաստ են, բայց երբեք չեն դիջանել ծառայելու մարդուն, մինչեւ որ մարդը իրեն վերջին ճիգը չը թափէ նոցա իրեն ծառայեցնելու համար։

Ուրիմն այս մեծ ձշմարտուքիւնը ընդ միշտ ունենալու ենք մեր մտքերի մէջ, որ Աստուած այնպէս է կազմակերպել տիեզերքը եւ մարդկային քնուքիւնը, որ անքաւ եւ օգտաշատ զօրուքիւններ կարող են անօգուտ մնալ մեզ համար, եթէ մարդը իր բոլոր ճիգը չը թափէ եւ ամբողջ կորովը եւ ձարտարուքիւնը գործ չը դնէ նոցա մարդկային ընկերուքեան համար գործադրելու։ Այս է քնուքեան անյեղլի օրէնքը, դանդաղ եւ անաշխատ մարդկանց ու ժողովրդեան համար քնուքիւնը քան չունի ընձեռելու։

ՀՈՅԵԱՅԲ ԴԻՊԻ ԱՊԱԳԱՆ

Անցեալի վերայ նայելով կարող ենք ապահով միջոց ունենալ ապագայի վերայ մի գաղափար առնելու համար։ Ուստի եթէ վերջին վեց դարում գիտութեան կատարած յառաջադիմութեան վերայ մտածենք, կը տեսնենք թէ յաջորդ դարում գիտութեան կատարելիք գործերը գրեթէ անսահման են լինելու։ Եթէ մի մարդ անցեալ դարերում գուշակած լինէր թէ ապագայի մէջ ջուրը եւ լուսաւորիչ մի հեղուկի խողովակների միջոցով տուն պէտք է տարուի, շոգու եւ գործիքների միջոցով մարդիկ մեծ արագութեամբ պէտք է անցնեն ծովից եւ ցամաքից, թէ մի քանի վայրկեանում պատգամներ պէտք է ուղարկուին ովկիանոսներից այն կողմը եւ կամ մի փոքրիկ թելի միջոցով մարդիկ իրարու հետ պէտք է խօսակցին իրենց սո-

վորական կերպով, ելեքտրականութեան եւ շոգու այս սովորական գործերը այսպէս նկարագրող մինչ չիմար պէտք է համարուէր այն ժամանակ։ Այս զարմանալիքների մէջ ոչ պէտք է տարակուսի թէ գիտութիւնը յաջորդ դարերում մեծագոյն քայլերը չը պէտք է անէ, մեր մտածողութիւնը այս տեսակէտից նայելով ապագայի նկատմամբ հետեւեալ գուշակութիւնները կ՚անում։ Վաղանցորդ դարում ելեքտրականութիւնը զարմանալիքներ պէտք է գործէ, որոնք այժմ մեզ համար բոլորովին անհաւատալի պէտք է լինին, ելեքտրական կայծերի միջոցով մէկ րոպէում պէտք է պատասխանուին մեր համագամ կերպարները։ Գուշակուած ապակու եւ թելից ելեքտրական լոյս գործածելով երկրի պատշգները անչափ պէտք է քաղցրացուին։ Ամբողջ տարուան մէջ, ամառ եւ ձմեռ, ցուրտ եւ դիշեր, պատշգներ եւ

բոյսեր պէտք է աճեն, այնպէս որ այժմ հարիւր լիտր բերք արտադրել արտը՝ այն ժամանակ պէտք է արտադրէ 10·000 լիտր։ Մենք այժմ եկուամ ենք մեր կերակուրը, բայց օդը եւ ջուրը ընդունում ենք առանց հիւնելու, եւ այս երկու տարերքների միջոցով յառաջ են գալիս այն ամեն հիւանդութիւնները եւ վնասանգաւոր ախտերը, որ՛ք առաջացնում են մարդկութիւնը։ Ապա՛ գայում ջուրը պէտք է զտուի մաքրուի եւ պատրաստուի մարդկային գործածութեան համար եւ այդ եղանակով պէտք է մաքրուի ախտերից բոլոր սերմերը եւ մարդկային էակները պէտք է չը շնչեն օդը մինչեւ որ չը մաքրուի բոլոր թունաւոր նիւթերից, որից յետոյ պէտք է ընդունուի ապակիով ծածկուած փոքրոնների եւ բնակարանների մէջ, որոնց մէջ պէտք է բնակուի ապագայի մարդը։ Տներ

ը եւ աշխատութեան վայրերը պէտք է պատրաստուին շրջապատ անբաւ շինուածների մէջ, որոնց մէջ օդը ոչ թէ միայն պէտք է լինի առողջարար, այլ եւ հիշատակի եւ քաղցրաբոյր։ Ամառուան տապը եւ ձմեռուան ցուրտը պէտք է վերանան, որովհետեւ հնարաւոր կը լինի ուղղել բարեխառնութիւնը արուեստական միջոցներով եւ երկրագնդիս ամեն կողմերը հաւասարապէս բնակելի պէտք է լինին։ Ցերեկը դիշերուանից աւելի հրապոյրներ պէտք է չունենայ, որովհետեւ արուեստական լուսաւորութիւնները աւելի հաճոյական պէտք է լինին քան որ եւ է լուսաւորութիւն, որ կարող է ընծայել մեզ ցերեկուան մեծ լուսաւորը։ Այն ժամանակ անշուշտ օդը նաւարկելի պէտք է լինի, եւ այս պատճառով երկրի երեսի երեւոյթները մեծապէս պէտք է վոփոխուին, որովհետեւ մեծ քաղաքները պէտք է

շինուին առաջադարձ բլուրների գագաթներին վոխանակ անմատուց եւ ցած դաշտավայրերի վերայ, նոքա հնար մեծ շարժիչ զորձիքների միջոցով ահագին լեռների շղթաները, որոնք այժմ խափանում են մարդուս յառաջադիմութիւնը որ եւ է կողմ, կարող են հարթ հաւասար լինել, եւ երկու բեւեռների շուրջը սպառած սառուցը կարող են հալել եւ նաւարկելի վիճակի մէջ դնել։

ԵՐԿՐԻՍ ՎԱԽՃԱՆԸ

Երկիրը ծնուած է եւ պէտք է մեռնի, պէտք է մեռնի կամ ծերանալով, երբ իր կենսական տարերքները սպառուին, կամ արեգական շիջմամբ, որի ճառագայթներից է կախուած իր կեանքը, կարող է մեռնել նաեւ մի որ եւ է արկածով, երկնային մի որ եւ է մարմնի դիպչելով, որին կարող է հանդիպել իր

ճանապարհի վերայ, բայց այս խիստ անհաւանական է, կարող է մեռնել բնական մահուամբ իր կենսական տարերքների սպառումամբ, հաւանական է արդարեւ թէ ջուրն ու օդը եւս նուազեն, ջուրը միմնոլորդի նման թւում է թէ երբեմն աւելի մեծ էր քան այժմ, ջուրը թափանցում է երկրի կեղեւի մէջ եւ քիմիապէս միանում է կարծր մարմինների հետ, գրեթէ ասոյգ է թէ երկրի մէջ տասը կիլոմէտր խորութեամբ եւացող ջրի ատիճան ջերմութիւն կայ, որ արգելում է ջրի աւելի ցած իջնելուն, բայց ծծելը սկսած է շարունակուի երկրագնդի հետզհետէ սառչելովը, երկրի դրացին, լուսինը, որ աւելի փոքրը եւ թեթեւ է քան երկիրը, արդէն կորցրել է իր հեղուկների եւ գազերի մեծագոյն մասը, որովհետեւ այն անթիւ հաւնարանները, որոնց բաց բերաններով կարող էին դուրս թափել իրենց բոցավառ փո-

քոուկրը այն ժամանակ միայն, երբ լուսնի մթնոլորտը շատ ապրի թանձրը էր քան այսօր։ Ո՛վ գիտէ, թերեւս այստեղից ականատես ենք յանդէսս լուսնի բնակիչների վերջին մնացորդների մահուան տագնապներին, որոնք մրցում են ցրտի խստութեան անդունդ յարձակման դէմ, նիթէ երկրի այդ դրացու բնակիչները կարողանային խօսել մեզ հետ հեռագրով եւ պատմել իրենց դժբնդակ կեանքի պատմութիւնը, այն ժամանակ միրաւի որ իրապէս ակատնատեսներ կը լինէինք նոցա դառն վիճակին։

Թւում է թէ նաեւ մեր մթնոլորտը բազկացնող թթուածինը, բորակածինը եւ ածխածինը ենթակայ են յամր ծծման։ Խորհրդ միտքը կարող է պատգայ դարերի մշուշի միջից նշմարել այն դեռ հեռաւոր ժամանակը, երբ աշխարհս զրկուածայն մթնոլորտային ջրային շղգեստ,

որ իր շուրջը կենտրոնացնելով արեգակի ճառագայթները, պաշտպանում է իրեն տարածութեան սառնային ցրտից։ Ի պէտ է ցրտանալ մահուան քնով, լեռների գագաթներից ձիւնը պէտք է իջնէ հովիտների մէջ վանելով իր առաջից կեանքն ու քաղաքակրթութիւնը, եւ ծածկելով ընդ միշտ քաղաքներն ու ագդերը, որոնց պէտք է հանդիսի իր ճանապարհի վերայ։ Կեանքն ու մաքրկիայնի գործունէութիւնը պէտք է դառնան անզգալի կերպով դէպի այրեցեալ գօտին։ Մեծաշուք եւ հռետոտ քաղաքները պէտք է ննջեն յաջորդաբար առուցի տակ եւ բազմաթիւ դարերով այրեցեալ գօտու բնակիչները ի զուր պէտք է ձեռնարկեն բեւեռային խուզարկութիւններին, գտնելու առուցի տակ աշխարհիս մեծահամբաւ մայրաքաղաքներն ու քաղաքները, Յովերի եզերքները պէտք է փոխուին եւ երկրիս աշ-

խարհագրական քարտէսը պէտք է կերպարանափոխուի։

Մարդիկ այսպէս պէտք է ապրեն եւ շնչեն հասարակածի մէջ մինչեւ այն օրը, երբ մարդկային ցեղի վերջին մնացորդները պէտք է վաղեն սուալլուսի եւ սառած բազմեղուս վերջին ծովի եզերքների վերայ արեւի դժգոյն ճառագայթների տակ, որ այնուհետեւ պէտք է լուսաւորէ միայն շրջիկ մի ամայութիւն, որ պէտք է դառնայ անօգուտ եւ ապարդիւն ջերմութեամբ լուսատուի շուրջը։

Բնութեան պատմիչը պէտք է կարողանայ ապագայում գրել, Աստ հանդչի աշխարհի ամբողջ մարդկային ցեղը, աստ հանդչին վաստակաւորութեան բոլոր երազները, կատարի վրէժխնդրութեան եւ ատելութեան դաւն արգիւնքները, պատերազմական վաստքի բոլոր յաղթանակները, աշխարհիս տէրողների մեծամեծ գանձերը եւ մեծահնչիւն դրօշները, թե-

րի գիտութեան բոլոր գրութիւնները։ Աստ հանդչին մարդկային հնարագիտութեան բոլոր մնացորդները, աշխարհիս իմաստութեան բոլոր յիշատակները, աստ հանդչին մարդկային ազգի քաղաքակրթութեան եւ մեծագործութեան փուշիացած փշրանքները, մահկանացուների բոլոր նիւթական ձեռնակերտների հրաշալիքները եւ մարի ու հանճարի հիւանդանչ արտադրութիւնները։

Բայց թերեւս աշխարհս պէտք է ապրի շատ երկար եւ վերջապէս մեռնի արեգակի շիջմամբ, ինչ որ էլ լինի, սակայն աշխարհի բադդն ու ճակատագիրը միշտ նոյնն է, ցըրտից մեռնել, Ա՛ս աչքն դէպքումբնութիւնը աշխարհին վերապահում է մի քանի միլիոն տարիներ, երկրորդ դէպքում միլիոնաւոր դարերով պէտք է հաշուել ապագայի ընթացքը։

Արեգակը պէտք է շիջանի մի քանի միլիոնաւոր դարերի ընթաց-

քում կոլցնելով շարունակաբար իր ջերմաթիւնը, որովհետեւ իր ճառագայթների միջոցով վառնուած ուժը կարելի է ասել թէ անեռիւակայելի է։ Արեգակի մէկ ժամուան արտադրած ջերմաթիւնը կարող է եւացնել 2900 միլիոն հազարամեայ խորանարդ աստիճան սառած ջուրը։ Այն քանակութիւնը, որ մոլորակները ընդունում են եւ գործ են ածում իրենց կեանքի համար, աննշան է կորցրած քանակութեան բաղդատմամբ, բայց այն բլծերը, որոնք պարբերաբար ծածկում են նորան, ուրիշ բան չեն կարող համարուել, եթէ ոչ ցրտացման նշանները։ Պէտք է դայ այն օրը, երբ այս բծերը շատ աւելի բազմաթիւ պէտք է լինին քան այժմ եւ պէտք է սկսեն ծածկել արեգակի կարեւոր մի մասը։ Դարէ ի դար մթութիւնը պէտք է աճի աստիճանաբար, թէեւ ոչ կանոնաւորապէս, որովհե-

տեւ կեղեւի աւազին բեկորները, որոնք պէտք է ծածկեն հեղուկ հրաշէկ դնդի մակերեւոյթը, պէտք է ընկղմեն հեղուկ տեղի տալով նոր կազմուածքներին։ Այսպէս դարերը պէտք է տեւեն արեգակի շրջանելը եւ վերջապէս բնականելը, մինչեւ այն հեռաւոր օրը, երբ ցուրտը պէտք է գրաւէ վերջնականապէս համակ մակերեւոյթը, երբ վերջին ընդհատական եւ դժգոյն նշոյլները պէտք է նուաղին ընդ միշտ եւ հրեղէն գունդը պէտք է մթագնի եւ այլ եւս չը պէտք է ղուարթացնէ բնութիւնը իր լուսոյ եւ ջերմաւթեան քաղցր բարիքներով։

Աստղաբաշխները տեսած են արդէն քանի եւ հինգ աստղեր, որոնք շողացած են ջլաձգական փայլով եւ մանաւանդ շրջման մէջ ընկած, արդէն մեր նախահարց աղջունած պայծառ աստղները անհետացած են երկնքի քարաէսից։ Արեգակն էլ ոչ

այլ ինչ է, եթէ ոչ մի աստղ, նա էլ պէտք է կրէ նոյն բաղդը։ Աստղները, ինչպէս աշխարհներ ծնվում են մեռնելու համար եւ յաւիտենականութեան մէջ իրենց երկայն ապրելը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի առաւօտեան տեւողութիւն, կը գայ այն օրը, երբ արեգակը մթնի, բայց դեռ ջերմ։ Էլեքտրական եւ անշուշտ աղօտ լուսաւոր մագնիսական արշալուսի ծիւեալ վայրով, պէտք է լինի մի անքաւ աշխարհ լի տարօրինակ էակների բնակութեամբ։ Արեգակի շուրջը պէտք է շարունակեն թափառել մութ եւ կոյր աւեր եւ ամայի մոլորակները մինչեւ այն օրը, երբ արեգակնային հանրապետութիւնը պէտք է ջնջուի ամբողջովին կեանքի գլուխից եւ պէտք է անհետանայ թողնելով իր տեղը աշխարհների այլ դրութիւնների, այլ արեգակների, այլ երկրների, այլ մարդկութիւնների եւ հոգիների — տիեզերական եւ

յաւիտենական պատմութեան մէջ մեր յաջորդներին։

Այս է ճակատագիրը երկրի եւ բոլոր աշխարհների, պէտք է եղրակացնել արդեօք, թէ այս յաջորդական վախճաններով տիեզերքը մի օր ոչ այլ ինչ պէտք է լինի քան անբաւ եւ խորին մթութիւն եւ ոչնչութիւն։ Ո՛չ, եթէ այսպէս է, այսպէս պէտք է լիներ արդէն ի վաղուց անտի։ Ընութեան ղօրութիւնները չէին կարող մնալ անգործ։ Աստղները պէտք է յարութիւն առնեն իրենց աճիւնների, Վաղեմի բեկորների հանդիպումը նորանոր բոցեր պէտք է ցայտեցնէ եւ շարժման դէպի ջերմութեան փոխանցումը պէտք է ստեղծէ միգամածներ եւ աշխարհներ։ Տիեզերական մահը չը պէտք է թագաւորէ երբէք, այլ տիեզերական կեանք եւ կենդանութիւն։

ՏԻԵԶԵՐՔ

Երկնային մարմինները դիտելով արդի դիտութեան ընծայած լուսով եւ աչքի առաջ ունենալով այն զանազանութիւնը, որ երեւումէ ոչ թէ միայն նոցա մեծութիւնների, դիրքերի եւ շարժումներ մէջ, այլ նաեւ այն վիճակների մէջ եւս, որոնց հետ սոքա անցնումեն անհաշուելի դարերի հոլովմամբ, մնաձութեան համար ամենախորին եւ բարձրագոյն առարկաներ են առաջ գալիս: Լուսընթաց եւ երեւակ ահագին մոլորակները ներկայացնումեն մոլորակային մի վիճակ, որ երկրիս եւ ուրիշ մոլորակների վիճակից շատ աւելի հին է, երբ գնումեն արեգակը. գանումեն նախնական վիճակումն, մինչդեռ գալանման ծիրկաթինը կամ այն շողխանման աստղային զանգուածները, որոնք անհուն տարածութեան մէջ սփռուած են,

ցոյց են տալիս արդէն ծանօթ տիեզերական կազմուածքների ամենից նախնական վիճակը. Միւս կողմից Հրատն եւս իր փոքրիկ ծավիանոսով եւ անօդ մթնոլորտով ներկայացնումէ աշխարհի մի դրութիւն, որ երկրի եւ լուսնի արդի վիճակի միջանկեալն է, եթէ կարելի լինէր առաւել գոհացուցիչ կերպով դիտել փոյլածուն, հաւանաբար այն եւս պէտք է ունենար լուսնի դրութիւնը, որի մէջ դեռ եւս պէտք է մտնէ մեր երկիրը երկար դարեր անցնելուց յետոյ. մինչդեռ Ս.րուսեակ մոլորակը, որչափ հնարաւոր է դատել, թէպէտ սակաւ ինչ փոքրագոյն է քան երկիրը, ներկայացնումէ երկրից աւելի հին դրութիւն.

Գալով լուսնին, կարելի է համարել նրան իբրեւ մի այնպիսի աշխարհ, որ բոլոր այս դրութիւններից վաղուց արդէն անցած լինելով, այժմ

հասել է մի այնպիսի կէտի, որ մեղորակային մեռելութիւնը կարող է համարուել։

Սակայն չի կարելի ենթադրել թէ նորա մակերեւոյթի վերայ բոլորովին տեղի չի ունենում փոփոխութիւն, ընդհակառակը լուսնի մասնաւոր մի քանի յատկութիւնները մի կարգ փոփոխութիւններ են առաջ բերում այնպիսի մի արագութեամբ, որի նմանը չի կատարվում երկրի վերայ։ Լուսնի շատ երկար օրերը, նորա անջուր լինելը եւ անօդ մթնոլորտը անշուշտ բաղդատաբար շատ արագ կերպով նպաստում են լուսնի մակերեւոյթի փըշրուելուն։ Լուսնի երկար եւ խիստ տօթագին ցերեկներին նորա մակերեւոյթի ժայռերը ի հարկէ բաւական սէտք է ընդարձակուին չափազանց տաքութիւնից, որովհետեւ տաքութիւնը լուսնի վերայ հեռացող ջրի աստիճանից աւելի է բարձրանում

իսկ նորա երկայն գիշերների ցուրտը երկրի սառուցեալ սահմաններից ցրտից շատ աւելի սաստիկ լինելով, անշուշտ կրկին կծկուում են ընդարձակուած ժայռերը։ Այս փոխադարձ ընդարձակումն եւ ամփոփումն հետզհետէ փշրում է լուսնի մակերեւոյթի ամենադարձր եւ ամենից գահավէժ մասերը եւ անսպառակոյս երկար ժամանակից յետոյ (մի քանի միլիոն տարիներից յետոյ) լուսնի մակերեւոյթի բոլոր խորտուբորտ տեղերը պէտք է հաւասարուին։ Սոյն փոփոխութիւնները, որոնք լուսնի մակերեւոյթը մեծամեծ հեռադիտակներով եւ ղգուշութեամբ դիտողները տեսել են, բոլորն էլ առանց բացառութեան խորտակմանն այս շարունակական եւ աստիճանական գործողութիւններն են ընծայում։ Լինել հրաբխային բաժակի անեղերեւութեանալը միայն այս կերպով կարելի է բացատրել, Հրաբուխի բե-

քանը մինչեւ իսկ վոքրագոյն հեռադիտակով դիտում եւ լուսնի քարտէսների վերայ վերցնում էին։ Մի քանի տարի առաջ Շմիտ նշանաւոր լուսնագէտը, որ իր ամբողջ կեանքը նուիրել էր լուսինը դիտելուն, յայտարարեց, որ այլ եւս չի երեւում հրաբուխի բաժակը։ Ուրիշ աստղաբաշխներ հետաքրքիր լինելով, հրաւիրագոյն հեռադիտակներով զինուած երկրի ամեն կողմերից սկսեցին դիտել, եւ գտան, որ այն ահագին բերանը ամենազօրաւոր դիտակներով անգամ հազիւ տեսանելի է։ Լուսնի մէջ եղած զօրութիւնները կարող են սորա նման սեպագրեալ ժայռերը վերշրել եւ կործանել, ինչպէս կործանեցին այն ահագին ժայռերը, որոնք երբեմն շրջապատում էին սոյն խոռոչը, թէ այս օրինակ փոփոխութիւններով ցոյց տրուած մի կենդանութիւն դեռ եւս մնում է լուսնի կազմուածքի մէջ, ոչ թէ միայն

հաւանական է, այլ եւ սոյդ է, քայց գուցէ կանոնաւորութեան վերաբերեալ փոփոխութիւններ, որոնց ոմանք երբեմն էլ թէ տեսնում էին, պատիկ եւ անհիմն են, որովհետեւ այժմ ստուգապէս յայտնուած է թէ լուսինը բոլորովին սառած է, Ուրեմն, լուսնի կազմուածքինը դեռ եւս կրում է փոփոխութիւններ, բայց ինչպէս որ անշնչացեալ մի որ եւ է մարմնի վերայ եղած փոփոխութիւնները կենսականութեան գոյութեան նշանները չեն կարող համարուել, այնպէս եւ լուսնի փոփոխութիւնները չեն ցոյց տալիս թէ լուսինը մի լրակատար իրական կեանք ունի։ Մի եւ նոյն կերպով թէ արեգակնային դրութեան բոլոր անդամները եւ թէ նոյն ինքն արեգակը ոչնչով է անցնում բոլոր այն դրութիւններից որոնց միջով անցել է լուսինը։

Իւրաքանչիւր հրաւիրաւ գունոտ շաբունակաբար ցոլացնում է իւր ջեր-

մուքիւնը դատարկութեան մէջ, այնպէս որ իւրաքանչիւրը վերջապէս պէտք է հասնի ջերմութեան մի եւ նոյն մահաբեր աստիճանին, որովհետեւ կենսականութիւնը ջերմութեան աստիճանից կախումն ունի, ուստի եւ իւրաքանչիւր գունտ հասնում պէս յառաջանում է դէպի տիեզերական մահը, եւ որչափ որ մարդուս իմացականութիւնը կարող է դատողութիւն կազմել տիեզերքի վերայ, այդ դատողութեան եղրակացութիւնն այն է, թէ տիեզերքի մէջ գտնուող իւրաքանչիւր մարմնի այս դէպի մահը ունեցած հակումը պարունակում է իր մէջ նաեւ ամբողջ տիեզերքի դէպի մահը ունեցած հակումը, Արդարեւ, կարելի է ասել, թէ քանի որ տիեզերքը անհուն է եւ մարդիկ հունաւոր, չի կարելի այս օրինակ եզրակացութիւններ անել այն տիեզերքի համար, որ ըստ թէ հասկանալը, ըմբռնելն ան-

գամ անհնարին է, սակայն պէտք է ընդունել նաեւ թէ, եթէ երբէք մարդս իւր տրամաբանող կարողութիւնների վերայ կարող է վստահել, ըստ արդի գիտութեան ուղիղ լինել է թուում այս ենթադրութիւնը, թէ տիեզերքի կեանքը արդեամբ վերջացած պէտք է լինի, երբ անհուն տաւածութեան մէջ գտնուած ամենից մեծ եւ ամենից երկար ապրող գունտը իր մահուան հասնի, բայց եւ այնպէս այս մարդկային տեսութեամբ ապացուցուած իրօք անհաւատալի եզրակացութիւնից խուսափելու մի ճանապարհ կայ միայն,

Չի կարող լինել, որ ինչպէս մարդիկ հին ժամանակներին երկիրը տիեզերքի կենտրոն համարելով սխալուած էին, ինչպէս որ սխալուած էին կարծելով թէ բոլոր ժամանակի կենտրոնը, ժամանակի այն շրջանն է, որի մէջով երկիրը այժմ անցնելու վերայ

է, նմանապէս սխալուած լինելն կարծելով թէ տիեզերքը միայն այն սիեզերքն է որին մարդիկ այժմ կարողանում են ըմբռնել, Չի կարող լինել, որ աւելի բարձրագոյն կարգի աշխարհներ գոյութիւն ունենան, որոնք մեր տեսանելի տիեզերքի հետ աննչութիւն ունենականութեան միջոցով, եւ չի կարող լինել, որ այն բարձրագոյնից էլ վերեւ, բարձրագոյն եւ եւս առաւել բարձրագոյն մոլորակային աշխարհներ գոյանուին անսահմանի գրութեամբ։ Աստղերի անսահմանի տարածութեան մէջ անհունի ժամանակներից սկսած այդ զանազան զանգուածներով մարմինների փոփոխութիւնները որդեօք դէպի քայքայում թէ դէպի կեանք են տանում այդ մարդու սահմանաւոր մտքի ըմբռնումից անհնաւսելի բարձր է, ուստի չի կարելի վճռական մի որոշ եզրակացութեան գալ։

Անտարակոյս այս բազմազան-

կեալ անհունութիւնների մէջ մարդ ինքն իրեն կորցնում է, անշուշտ կորցնում է ինքն իրեն մարդս նաեւ տարածութեան եւ ժամանակի անհունութիւնների մէջ, որոնց մէջ ձգուած է մարդուս փոքրիկ կեանքը, մինչդեռ անհուն վաստուսի գալանիքը, երբ մեզ ծանօթ տիեզերքը նկատենք, անքննելի պէտք է երեւի, բայց հնարաւոր մեկնութեան կարելի է գանել, երբ որ ընդունուի թէ, կան անտեսանելի աշխարհներ, որոնք վերաբերուամբ մեր այժմեան ըմբռնած տիեզերքի տարբեր կարգերի։

ԱՐԵԳԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ

Արեգակը, որ ոչ թէ միայն մեր աշխարհին լոյս եւ ջերմութիւն տուող ջահ է, այլ եւ անհունութեան մէջ իրեն հետեւող մոլորակներին կեանք տանող եւ լոյս բաշխող, Անակսակոր յոյն իմաստասէրը (438 ն.ք.) կարծում էր թէ հազիւ Պէլոպոնէսի տարածութիւնն ունենայ։

Սակայն այսօր գիտենք, թէ երկիրը մի անտեսանելի չնչին կէտ է բաղդատելով իր ճառագայթներով ողողող այն հսկայական տիեզերքի հետ, որ երկրից մօտ 1/2 միլիոն անգամ մեծ է։

Երբեմն երբեմն տեզի ունեցած արեւի բոլորական խաւարման ժամանակ շատ դիտողութիւններ են հղել երկրիս այլեւ այլ կողմերից համբաւաւոր աստղաբաշխների մեծահնչակ հեռադիտակներով, որոնք մեծապէս նպաստել են աւելացնելու

մարդկանց գիտութիւնը այդ մեծ լուսատուի նկատմամբ, որից կախուած է ամեն կեանք մեր մոլորակի վերայ։ Արեւի կազմութեան մասին աստղաբաշխների գաղափարները բաւական փոփոխութիւններ են կրել 19-րդ դարավերջին եւ արեգակնային բնական գիտութեան շատ կարեւոր կէտեր, որոնք անորոշ էին, հետզհետէ երեւան եկան արդի տեսութեամբ։

Լուսանկարին վերապահուած էր անակնկալ մի օգնչելիք, այն է՝ արեգակի իսկական լուսանկարը վերցնել զգայուն թիթեղի վերայ այնպիսի հեռաւորութիւնից, որին սրագընթաց մի կառախումբ 350 տարուան ընթացքում հազիւ կարող է հասնել։

Արեգակի առաջին լուսանկարը վերցրեց Մազօրին 1842-ի խաւարմանը, ապա Ֆուգօլդ 1845-ին։ Տասն տարուց յետոյ Ռէտ արե-

դակնային մակերեւույթի վայրկենական երեւույթը ցոյց տուեց, վերջապէս Յանսէն լուսանկարեց արեգակի ճիշդ պատկերը։

Արդի աստղաբաշխների համար միառժամանակ էր դարձել քարտէսների վերայ վերցնել ոչ թէ միայն այն ցցուածները, որոնք արեւի ակաւառակի եղերքներից են դուրս դալիս, այլ նաեւ նոցա, որոնք ծածանվում են արեւի մակերեւույթի վերայ եւ որոնց ակար լոյսը կորչում է հրագունդի շողացող լոյսի մէջ, փարիզում Տէլանդրը եւ Զինկադոյում Հէյլը, երկուսն էլ այս նպատակին հետամուտ են եւ երկուսն էլ վստահ յաջողութեան, այնպէս որ, երբ մի քանի դժուարութիւնների էլ յաղթեն, արեւի մակերեւույթի ամբողջ աշխարհացոյցը կարելի է ունենալ իր բոլոր բծերով, ցցուածներով եւ այլ եւ այլ երեւոյթներով։

Այս ինքնին մի անհուն յառաջադիմութիւն է, բայց երկու աստղաբաշխներն էլ առաւել մեծ յոյսեր ունին։ Աշխատում են ստանալ աղօտ, անտեսանելի պատկի ամեն օրուան լուսանկարն էլ, եւ հաւանական է, որ ապագայում դէպի յաջողին։ Տէլանդրը իր լուսապատկերացոյցի դործիքով ծծել է տալիս արդէն պատկից բղխած բոլոր լուսաւոր ճառագայթները եւ հատուածակով պատկու միջոցով գործիքի մէջ է առնում միայն մանրշակագոյն ճառագայթները, այնպէս որ կարողանում է միայն արեգական պատկը, կամ ինչպէս սովորաբար ասվում է՝ վառքը, լուսանկարել մանրշակագոյն, բաժանուած երկնքի ցրուած լոյսից։ Արեւի այս մասը, որ անտեսանելի է, միայն խաւարումների ժամանակն է տեսնվում, այս պատճառով էլ շատ դժուար մի գործ է վերցնել ամեն օրուան քարտէսները այն

շողշողուն գաղտնալից երեւույթի, որ շրջապատում է մեր պայծառ աքեւը եւ զարթեցնում է աստղաքաշխների զմայլումը եւ տեսնվում է շատ քիչ ամիսներ այն էլ միայն խաւարման ժամանակ։

Այս խաւարումների միջոցին դիտածներն էլ մի եւ նոյնը չեն։ 1860-ին յիշեալ պսակը գրեթէ գնդակերպ էր։ 1868-ին անհուն ճառագայթներ արեւի տրամագծի գրեթէ կրկին երկայնութեամբ դուրս էին ցցուած նորանից։ 1889-ին աւելի ընդարձակ էր հասարակածային սահմանների մէջ։ վերջին խաւարման ժամանակ կրկին կանոնաւոր մի ձեւ ունէր։ Այս փոփոխութիւնները ինչպէս ասում են աստղաքաշխները, մի որոշ կապակցութիւն ունեն արեւի բծերի թուի հետ, այնպէս որ երբ բծերը բազմաթիւ են լինում պսակն էլ աւելի

կանոնաւոր մի ձեւ ստանալու պատճառ են լինում։

Ի՞նչ է այս նիւթը, որտեղից է գալիս եւ իւր ապագայ ճակատագիրը ինչ պէտք է լինի, բոլոր այս հարցերին պէտք է պատասխանուի նորանոր հետազօտութիւններով, առ այժմ այսքան միայն նկատուած է, որ հողագնդի դէպքերի պատմական արձանագրութեան սկսելուց, այսինքն մի քանի հազար տարիների ընթացքում արեգակի կորովի մէջ զգալի նուազում դիտուած չէ, ինչպէս ենթադրում է, թէ արեգական ճառագայթումը միայն մակերեւոյթի վերայ չէ կատարվում, այլ եւ ներքին ահագին հրային հոսանքներ շարունակ դէպի դուրս են բերում հրաւառ նոր կայաներ, ուստի եւ արեգական վիթխարի ծաւալի մէջ զգալի փոփոխութիւն չի նշմարվում։ Սակայն թուականը որքան էլ հեռաւոր լինի, միլիոնաւոր դարերի

ընթացքում այդ ուժը հետզհետե պէտք է ակաոանայ եւ վերջապէս չնչուի, արեգակնային ջերմութեան աղբիւրը պէտք է սպառի եւ դադնատը սառչի։ Այդ օրը արեգակը պէտք է հանդչի։ Այդ օրը այժմ իւրենց կենդանութիւն տուացող մոլորակները որոնց թուում եւ մեր երկրագունդը պէտք է մանեն աղջամուղջի թագաւորութեան մէջ, որի համար Լսող Բայրըն երգում է այսպէս։

«Սառած երկիրը օդի մէջ պէտք է ծածանի կոյր եւ սեւ, լուսինն իր ազօտ լոյսը այլ եւս չը պէտք է կարողանայ արձակել։ Պէտք է վառուին մարդկի իրենց մեծաշուք քնակարանները եւ խրճիթները յաւիտենական այդ գիշերը վերջին անգամ եւս լուսաւորելու եւ տաքացնելու, եւ մարդկի հաւաքուած իրենց հրդեհած քնակարանների շուրջը վերջին անգամ էլ իրարու

պէտք է նային իրար տեսնելու համար։

Աստղաբաշխները 10·000·000 տարի են հաշուում արեգական սառչելու այդ ինքը մեր երկրագունդի վերայ կենդանութեան աներեւոյթ լինելուն հասնելուն։

ԱՐՈՒՆԵԱԿ

Այս սոյծաւ եւ դեղեցկավայլ աստղը, որ գրեթէ վեց ամիս շարունակ փայլում է երեկոյեանները իբր երեկոյեան աստղ եւ մնացած ժամանակը առաւօտները իբրեւ առաւօտեան աստղ, աստղաբաշխներից ոմանք վերին են կոչում նորան, որ թարգմանվում է միլորեակ սիրոյ։ Նախնի ժամանակներում երբ ժողովուրդը կարծում էր թէ աստղները կառավարում են իրենց բազդը, նոքա, որոնք ծնվում էին Արեւեակի սոյծաւ աղջն եղած ժամա-

նակ, համարվում էին բարեբաստիկ, որովհետեւ Արուսեակը նկատվում էր մի բաղդատուր աստղ, իսկ Հրատը ընդհակառակը դժբաղդ։

Արուսեակը, որ դեղեցկագոյն է աստղների մէջ, աւելի նման է մեր երկրագնդին քան որ եւ է ուրիշ երկնային մարմնի։ Աստղներից շատերը, որոնք տեսնվում են երկնքի կամարի վերայ-մեծամեծ հրեղէն գնդեր են արեգակի նման եւ որոնց մէջ միայն Արուսեակն է, որ հաւասար է մեր երկրագնդին ըստ մեծութեան, Արուսեակը մեր երկրի մերձաւոր դրացին է, եւ իր արեգական շուրջը սնեցաճ շաւիղը աւելի մոտ է մեր երկրին, քան Հրատի, որ մեր երկրի երկրորդ դրացին է։

Արուսեակը արեգակից հաշուելով երկրորդ մոլորակն է, երկիրը երրորդը եւ Հրատը չորրորդը, երբ նայում ենք Արուսեակին պարզ աչքով երեկոյեան, տեսնվում է նա լուսոյ մի փոքրիկ կէտի նման, բայց երբ դիտում ենք հեռադիտակով, նա երեւում է իբրեւ փոքրիկ մի աշխարհ կախուած երկնքի կամարից։ Արուսեակը մեր երկրագնդի նման դառնում է արեգական շուրջը, բայց նորա տարին եօթն ամիս ու կէս է, ունի նաեւ եղանակներ, բայց դեռ եւս որքանութիւնը չէ իմացվում։ Թաւալում է նաեւ երկրի նման իր առանցքի վերայ եւ ունի տիւ եւ գիշեր, Բացի սորանից իմացուած է պինուիեամբ, թէ Արուսեակը ունի նաեւ մի լիսո մթնոլորտ, ուստի եւ ենթադրվում է թէ ունի ամպեր, ձուլ, ձոգ, լիճ, կղզի, գետեր եւ ամպկիանեան հոսանքներ, ուստի եւ Արուսեակը ունենալու է ամպեր, անձրեւ, հուր, փոթորիկ, փայլատակունք, եւ թերեւս ձիւն։

Այս բոլորից թէեւ կարելի է ենթադրել, թէ Արուսեակը բնակուած է մի մտքի արական էակ է, սա-

կայն շատ մեծ լինելով այնքանին եւ մեր երկրագունդի ընդարձակ չափութեան կրկնապատիկն ընդունելով չի կարող մեզ նման էակներուն բնակելի լինել։ Երկրի եղանակները յառաջ են գալիս 23½ աստիճան հակումից։ Եթէ երկիրը առանց հակման իր առանցքի վերայ թաւալէր, երբէք եղանակի փոփոխութիւն չը պէտք է լինէր։ Ձմեռ եղած տեղը միշտ ձմեռ եւ ամառ եղած տեղը միշտ ամառ պէտք է լինէր։ եւ ընդհակառակն եթէ չափազանց հակուած լինէր, ձմեռը տասնիկ ցուրտ եւ ամառը տասնիկ տաք պէտք է լինէր։ Արեւսեակը աւելի հակուած է քան մեր երկիրը, ուստի եւ այնտեղ ձմեռը խիստ ցուրտ եւ ամառը խիստ տաք պէտք է լինի եւ հետեւապէս մեզ նման արարածներուն համար անհանդուրժելի։ Ուստի անկարելի է ասել, թէ այս շքեղ մոլորակը բնակելի է, թայց թերեւս պէտք է դայ մի օրեւնիվ գիտէ

է թէ քանի միլիոն տարիներից յետոյ, երբ մեր երկրագունդը գադարէ մեզ նման էակներուն բնակելի լինելուց եւ Արեւսեակը սկսէ բնակելի լինել մեզ նման էակներուն, որոնք գիտեն այն ժամանակ երկնքի կամարը եւ տեսնեն մեր երկիրը պայծառ աստղ նման եւ աքանչանան նորա վերայ եւ յարուցանեն զժուարեւ կնճիռ խնդիրներ, ինչպէս մենք այժմ յարուցանումենք Արեւսեակի վերայ։

ԳԻՍԱՒՈՐ ԱՍՏՂԵՐ

Սոքա արեգակի շուրջը ճուռաճեւ կատարում են իրենց շրջանը, ամենք կարճ ամենք շատ երկար ժամանակամիջոցով, թէպէտ սոցանից շատ քչերը տեսնվում են լոկ աչքով, սակայն թուռով խիստ շատ են, երեւելի աստղաբաշխներ հաւատացնում են, թէ միայն մեր մոլորակային գրութեան ազդեցութեան ներքեւ եղող գիսաւոր աստղերի թիւը եօթն միլիոնի է հասնում. Քէփլերը աւելի առաջ գնալով ասում է, թէ նոքա ծովի ձկների չափ բազմաթիւ են. Գիսաւոր աստղերը իրենց վայլունութիւնը արեգակի լոյսից ստանալով, շարժվում են ամենայն ուղղութեամբ իրենց երեւոյթները փոփոխելով շատ տարբերակ. Գիսաւորների թիւը այնքան նուրբ եւ թափանցիկ է, որ նոցա միջից հեշտութեամբ տեսնվում են ուրիշ աստղեր. Երբեմն ունե-

նում են շատ տարաձայնութիւն մի եւ նոյն ժամանակ շարժուելով սքանչելի արագութեամբ, եւ քիչ անգամ է տեսնուել որ երկու որոշ մոլորիններին բաժանուին.

Գիտուած գիսաւոր աստղերի գլխաւորներից երեքը տեսնուած են 1680·1811 եւ 1843 թուերին. Աստղաբաշխների կարծիքով ամենից նշանաւորը 1811 թուին տեսնուեց, որ իր ընթացքը արեգակի շուրջը 3000 տարիների ընթացքումն է կատարում կատարել. Իր ընթացքի մէջ արեգակից ամենամօտ եղած կէտը 98, 700, 000 մղոն հեռու է, եւ արեգակից ամենից շատ հեռաւոր եղած կէտն էլ 40 քառիլիոն եւ 121 միլիոն մղոն է. Այն գիսաւոր աստղը, որ տեսնուել է 1843-ին, շատ նշանաւոր համարուեց գիտի երկայնութեամբ, որ 200·000,000 մղոնի չափ է հաշուած, սորա գունը փոքր լինելով մէկ ժամուան մէջ

1·317·600 մղոնի չափ է ընթանում արեգակի շուրջը։

Աբանչելի հիացմամբ Սաղմոսերգուի հետ ասում ենք «Որպէս ղի մեծ են գործք Քո Տէր, զամենայն ինչ իմաստութեամբ արարեր»։

ՄԵՋ ՄՕՏԵՑՈՂ, ՄԻ ԱՍՏՂ

Երկնքում գեղեցկագոյն աստղներից մինն է Ակուռոս կոչուած աստղը Անդրոմեդի համաստեղութեան մէջ, 1884-թուի յունուարին բրիտանական արքունի աստղաբաշխը արքունի աստղաբաշխական ընկերութեան հաղորդեց կանոնաւոր մի ցուցակով այն բոլոր արդիւնքը, որ ստացել էր Կրինվիչի դիտարանից 1883-ին կատարած դիտողութիւններով, որոնք հիմնուած էին գօլտ-Չըկճէնսի աստղների մերձեցման եւ հեռացման չափելու եղանակի վերայ։ Ա.յդ ցուցակի մէջ արձանագրուած են այս դիտողութիւնների գրեթէ երկու հարիւրը, որոնց քսան եւ մէկը վերաբերում են Ակուռոսին։ Այս դիտողութիւնները ցոյց են տալիս թէ այդ փողփողուն աստղը արագասլէս մօտենում է դէպի մեզ մէկ վայրկեանում 50 մղոն ընթանալով, ուրեմն մէկ րոպէում 3000 մղոն, մէկ ժամում 180·000 մղոն եւ մէկ օրում 4·320·000 մղոն։ Արդեօք այս մերձեցումը պէտք է շարունակէ, թէ վերջապէս աստղը կանգ պէտք է առնէ եւ այնուհետեւ կրկին յետ դառնայ։ Թէ այս շարժումը մի շրջանի մի մասն է, անշուշտ դարձեալ պէտք է սկսէ հեռանալ։ Սակայն գիտուած արագութեան աստիճանը այսպիսի շրջանային մի շարժում ցոյց չի տալիս եւ որովհետեւ երկար ժամանակ դիտումներն աստղաբաշխները, անշուշտ այդ արագութեան աստիճանը մի կարեւորութիւն ունի։ Ա.յսու ամե-

նայնիւ հաւանական է, թէ բազմաթիւ տարիների տեւողութիւն ունեցող մի ահագին շրջան կատարելու համար է, որ նա այժմ այսպէս է ճանապարհորդում եւ կարելի է թէ մի ժամանակ անցնելուց յետոյ, երբ աստղը սկսէ խոտորել շրջանի գծից հետեւելով, շարժման արագութիւնն էլ նուազի, եւ յետոյ սկսէ մեր երկրից հեռանալ այն նոյն արագութեամբ, որով այժմ մօտենում է մեզ։ Եթէ ընդհակառակը այսպէս շարունակէ մեզ մօտենալ մի օրում 4·320·000 մղոն, աստղը ղալիլէի կերպով առաւել պայծառ պէտք է երեւի յաջորդ սերունդներին հակառակ նորա այնչափ հեռաւորութեան։ Այժմեան մեծագոյն թղդանօթները նրանց ռումբերը արձակում են մէկ րոպէում 1400 ոտնաչափ արագութեամբ։ Արկտուրոս մեզ մօտենում է մի այնպիսի արագութեամբ, որ դրանից 200 անգամ աւելի է։ Այս

կերպով նա 21 օրուան մէջ ընթանում է մի հեռաւորութիւն, որ հաւասար է երկրի եւ արեգակի մէջ գտնուած հեռաւորութեան։ Հաշուած է, որ Արկտուրոսից մեր արդի հեռաւորութիւնը արեգակի հեռաւորութեան 1·622·000 անգամն է, Ուստի եթէ աստղը շարունակէ մեզ մօտենալ ցոյց տուած արագութեամբ մեզ հասնելու համար իր կատարած ուղեւորութիւնը պէտք է աւարտէ 93·000 տարուան ընթացքում։

Ներկայ դարուս Անգղիայի գարմանալի գիւտերից մինն էլ այն է, որ լորդ Լոզբիի հրաշալի հեռադիտակով երկնքի կամարը գննելով, այնտեղ անհուն հեռաւորութեան մէջ լուսաւոր մի մասին է տեսնուած, որի լոյսը աստղաբաշխական հաշուով տասնեակ է, թէ 35,000·000 տարիների մէջ կարելի է մեր երկրագնդին հասնել, եւ այն

մէկ տոլէռւմ ընթանալով 12·000·000 մղոն արագութեամբ։

Ա.ՆԵՐԵՒՈՅԹ ԱՇԽԱՐՀ

Մեծահռչակ մի բնագէտ ասում է թէ «բնութեան մէջ գտնուած անհունապէս մեծ եւ անհունապէս փոքրը առաջինները հետաքրքրական հիացման մէջ են ընկղմում մեզ»։

Ցերեկ, երբ մարդս աչքերը բարձրացնում է դէպի վեր, զննելու երկնքի մեքենայագործութիւնը եւ ցած է խոնարհեցնում ատոնցից սահմանների ամենափոքր արարածները խուզարկելու, ամենուրեք արարչագործութիւնը զքանչացում է պատճառում մարդուս։ Ամենուրեք անհունութիւն կայ։ Բացորոշ կերպով կարելի է տեսնել այն երկնքի կապուտակ գմբէթի վերայ. ուր աստղերի փոշին ցոլտնում է պայծառապէս, եւ նաեւ այն կենդանի շամանդաղի

մէջ, որի անհուն փոքրութեան պատճառով նորա կազմակերպութեան հրաշալիքը անտեսանելի է մարդկային աչքերից։ Ականաւոր մի ոլերճախօս ասում է, թէ «ով որ երեւակայութեան աչքով նկատէ այս տեսարանը, անշուշտ պէտք է զգայ մարդու փոքրութիւնը բազդատմամբ տիեզերքի մեծութեան հետ»։ Թէեւ ճշմարիտ է, որ ամբաւ ժամանակի եւ տարածութեան մշտնջենական տեղոլութիւնը յայտնապէս խոնարհութեան զգացմունքը, թէպէտ մարդուս իր ճանապարհի վերայ դրած իւրաքանչիւր քայլը իր անհնարին տկարութիւնն է յայտնում, բայց միտքը ներսից զօրացնում է իր ուղեւորութեան մէջ. ցոյց տալով երեն թէ իւր զօրութիւնը եւ թէ իւր վեհապանծ ծագումը, եւ երբ երկրի մակերեւոյթի վերայ կատարուած ահեղ երեւոյթները եւ երկնքի անբաւութեան մէջ ծաւալող անհուն

մեծութիւնները զննելուց յետոյ մարդս պէտք ցած է ուղղում իր աչքերը երկրի ամենափոքր բնակիչների վերայ, այնտեղ ևս անակնկալելի շքեղութեամբ յայտնվում է Աստուծոյ ամենիմաստ եւ ամենակարող նախախնամութիւնը։ Անքաւութեան այս տեսարանը, որ բացվում է ամենափոքր բաների մէջ, հնացնում է մարդուս ոչ նուազ քան այն անսահման զօրութիւնը, որ Աբարչագործութեան վսեմ տեսարանների մէջ է երեւում։ Ամենափոքր լի է կեանքով, մարդուս աչքը երբ զինուած է մանրադիտակով, կեանքի հետք է տեսնում նիւթի բոլոր անջրպետների մէջ, Ամէն տեղ եւ ամէն մարմնի մէջ մարդս հանդիպում է կենդանիների, որոնց թիւը հիւսաքանչ է, եւ չը կայ մի բան, որ առաջ նման մի փայլուն դադափար տայ անքաւ տարածութեան մէջ տարածուած ատեղերակենդանիների վերայ։

Մարդս այդ դաղափարի համար պարտական է մանրադիտակին, որ դար ու կէս առաջ հնարուեց։ Այս զարմանալի գործիքը այնքան նորատեսիլ, զարմանաբանչ եւ անակնկալելի առարկաներ յայտնեց մարդկանց, որ ամենուրեք ընդունուեց թէ իբրեւ մի նոր աշխարհ բացեց մանրադիտողը մարդկանց համար, եւ նոր խմն զգայարանք դարձաւ մարդուս համար անտեսանելին զննելու։

Այդպիսի մարդս բաւականին դիտութիւն ունի Աստուծոյ գործերի վերայ, որով կարելի է Աստուծոյ փառքի արձանչելի յայտնութիւնները տեսնել։ Սակ մարդկային աչքով կարելի է Աստուծոյ բազմաթիւ գործերը տեսնել եւ նրանով կարող է նորա բարեբերեան, կարողութեան եւ հանճարի ապացոյցները ուրանալ։ Սակայն մարդս գործիքներ էլ հնարեց, որոնք իր սահմանաւոր զգայարանքներին մեծապէս օգնեցին եւ այնպի-

սի իրեր յայտնեցին մարդուն, որոնց կատարելապէս տգէտ էր նախապէս։ Մանրադոյզը գոյացութեան մի նոր աշխարհ յայտ բերեց, որ լոկ աչքը երբէք չէր կարող գտնել։ Մանրադոյզով գտնուեցին կենդանիներ, որոնք մեր հեղուկների մէջ են լողում եւ մեր պտուղների մէջ սողում։ Հեռադիտակը, որ որպէսզի նոյն իսկ երկինքը ցած բերեց գննութեան ենթարկելու, բայց այնուամենայնիւ մանրադոյգները եւ հեռադիտակները Աբարչութեան համայն սրանչելիքները մեր աչքի առաջ բացել են արդեօք։ Մի՞թէ նոցանով կարող ենք մեր հայեցուածքը անհունս տարածութեան վերայ ձգել եւ սովորել երկնային մարմինների թիւը եւ ժամանակը, որոնք սկսնումին մեզանից վերեւ, մեզանից ներքեւ եւ մեր շուրջը։

Ճշմարիտ է, աստղաբաշխի եւ բնագէտի աշխատասիրութիւնները փառաւորապէս լուսաւորեցին այն-

պիսի պատահարներ եւ օգերեւոյթներ, որոնք առաջ մթութեան մէջ փակուած էին, սակայն մեր արեգակնային սահմաններից այն կողմը գանուած դրութիւնը բոլորովին անյայտ է, երկնային մարմինների վերաբերեալ բազմաթիւ խնդիրներ դեռ անբացատրելի են մնացել եւ դեռ շատ զարմանալիքներ կան, որոնց ոչ մի մարդկային աչք տեսած չէ իր հնարած վերին աստիճանի կատարելագործուած հեռադիտակներով ու մանրադոյգերով։ Ո՞վ կարող է պատմել, թէ ինչ գիտենիկ, վաեմ եւ ահարկու ցոյցեր են տեսել ուշնեսում երկնային մարմինների մէջ իրենց գաղտնածածուկ շարժումներով եւ թաւալումներով։

Մանրադոյգն էլ մեր աչքերի առաջ վոքը զարմանալիքների մի աշխարհ է բացել, որ առաջ անծանօթ էր մեզ, բայց մի՞թէ ամենայն ինչ յայտ է երկրի։ Բնութեան մէջ

ապրում եւ մեռնում անասունների
ծառերի տերեւների վրայ եւ մինչեւ իսկ մեր սպասէլների ծաղիկների վերայ, որ ոչ ոք չէ դիտել եւ զննել։ Միջատը կարող է մի չնչին բան երեւալ մեզ, սակայն մի գաղղիացի հմուտ բնագէտ ասում է «բնութեան մէջ չնչին բան չը կայ»։ Անասունոյ համայն գործերը մեր ուշադրան արժանի են, մանաւանդ պէտ է ուշադրութիւն դարձնենք նրանց ընտելցնելու եւ պահպանելու գործունեայի կերպերին։ Ամենափոքր ճանճերը ամենամեծ կենդանիների նման կատարում կազմուածք ունին եւ նաեւ այնպիսի գործարանք են կրում, որոնց չէ կարող հաւասարուել մարդս եւ կարելի է համարձակ ասել, թէ մեծամեծ իշխանների պարանոցների մէջ այնքան համեմատական, փառաւոր եւ շքեղ բաներ չենք տեսնիլ, որ հաւասար լինի մի ճանճի գլխի վերայ մանր

բարդեալ տեսած գեղեցկութեան եւ վայելչութեան։ Անուանել զարմանալի է, որ այսքան գեղեցկութիւններ տեսնում ենք ամենափոքր միջատի վերայ։

Այս երեւոյթիւնը առաւել զարմանալի կերպով ցոյց է տալիս Աստուծոյ իմաստութիւնը եւ կարողութիւնը, որ գոյնի եւ համեմատական ձեւերի այս եզական գեղեցկութիւնները արտադրել է այսքան առատութեամբ։

Արդեօք ուրիշ օրէնն զարմանալի էակներ, առաւել գեղեցկութեամբ զարդարուած եւ զգացման ու կամքի կարողութիւններով հագնուած մեր տեսութիւնից ու գիտութիւնից ծածկուած են մեր աչքերի անկատարութեան պատճառով։ Մի երեւելի քննասօս ասում է «Մի ծառի եզական տերեւը մի վոքրիկ աշխարհ է, որի վերայ քնակվում են անտեսանելի կենդա-

նինեը, որոնց զգայարանքների համար մի տերեւը անհուն մի աշխարհ է, նորա վերայ կան լեռներ, ձորեր, որոնք դրեթէ անչափելի են, եւ տերեւի մէկ ծայրի վերայ բնակուողները միւս ծայրի վերայ բնակուողների հետ այնքան հաղորդակցութիւն կարող են ունենալ, որչափ որ երկրիս երկու կիսագնդերի վերայ բնակուողները ունեն իրարու հետ»։

Այժմ ընդունուած եւ հաստատուած մի իրողութիւն է, որ ամենափոքր աւազի հատիկները եւ հողի ամենափոքր փոշու մէջ անհաշուելի թուով խեցիներ են գտնվում, որոնք երբեմն ապրող կենդանիների ծածկոցներ են եղել, Բնագէտները տեղեկացնում են մեզ, թէ կենդանի մանուկներ կան, որոնք աւազի մի հատիկից մեծ չեն, եւ որոնք այնպիսի նուրբ թելեր են շինում, որ չորս հազար այնպիսի թելեր պէտք են մէկ մազ շինելու համար, եւ

սակայն իւրաքանչիւր մանուկի մարմինը չորս որոշ մասերի է բաժանուած, որոնց իւրաքանչիւրը հազար նուրբ թելեր է հայթայթում մէկ թել շինելու համար, այնպէս որ, այն նուրբ թելը, որի չորս հազարը մի թել է շինում, նա նոյն իսկ աւելի նուրբ թելերից է շինուած, որոնք միատեղ հիւսուած են,

Արդ, եթէ բնութեան մէջ հետազօտութեամբ եւ մանրադիտակով այսչափ զարմանալիք յայտնուած են, ինչ պատճառ կայ կարծելու, թէ բոլոր զարմանալիքները տեսած ենք, Ո՞չ ապացոյն պէտք է հաւատալ թէ արուեստի եւ գիտութեան բոլոր յառաջադիմութիւններից վերջն էլ դեռ եւս Աստուծոյ կարողութեան հրաշագործութիւնների անբաւ դաշտեր կան ծածկուած, որոնք մինչեւ այսօր մարդուս զմայլումը գրաւող Աստուծոյ բոլոր գործերի նման լինելի ապացուցանումեն Աստուածա-

ին անձառելի գօրութիւնն ու մեծախառնութիւնը։

«Երկինք պատմեն զփառս Աստուծոյ եւ զարարածս ձեռաց նորա ցհայտատուեն»։

ՀԻՊՆՈՏԻԶՄ

Հիպնոտիզմի գիտութեան հրաշալիքներից մինը կարելի է համարել, գարուս մէջ հիպնոտիզմի երեւոյթները այնքան հետաքրքրական եւ այնքան զարմանալի են, որ գիտնական աշխարհն ուշադրութեան առարկայ են եղած այսօր։ Առաջին անգամ 1841-ին, գօկտոր Պրիա Մանիչեստրում գտաւ հիպնոտիզմի երեւոյթը, կենդանական մագնիսականութեան երեւոյթը, որ 1840-ին այնքան մեծ յեղափոխութիւններ յառաջ բերից Փարիզի բժշկական ճեմարանում, մոռացման ենթարկուեցաւ հիպնոտիզմի երեւոյթը,

1842-ին գօկտ. Պրէյ իր գիւտը լուսաբանելու համար կարեւոր մի գիրք հրատարակեց, որի յայտնած դէպքերը մեծ ազդեցութիւն յառաջ բերին բժշկական դասի մէջ, մագնիսագէտները շտապեցին փորձով ապացուցանել Մանչէստրեցի վերաբերմամբ գիւտերը։

Հիպնոտիզմը, ասում են Շարլ Ռոպէն եւ Լիբէրէն, քնի այն վիճակն է, որին ենթարկում է գօկտ. Պրէյ իր յատնախորհրդներին հետեւեալ եղանակով. վերցնում է իր բժշմատի եւ ցուցամատի մէջ մի փայլուն առարկայ, օրինակի համար արծաթեայ մի կոճակ եւ բռնելով այն մի որոշ հեռաւորութեան վերայ վարձին ենթարկուած մարդու աչքերից, հրամայում է նրան, որ շարունակաբար դիտէ առարկան։ Բիբերը սկզբից կծկվում են եւ ապա բաւականին ընդարձակուելուց յետոյ թմրում են ու արտեւանունքները մի

տեսակ թրթռումամբ անդադարաբար վահվռումներն 10-15 րոպէից յետոյ, եթէ հիւանդի ենթարկուածի թեւերից կամ սրունքներից բռնեն, պէտք տեսնեն, որ նա չի կարող սթափուել, այլ պէտք է փափագի ինջել ամենայն քաղցրութեամբ թմրած անդամներով։

Այդ օրինակ բազմաթիւ փորձերը կարող են նաեւ դործածուել այլ եղանակներով, որոնցով տեսնուած է, թէ հիւանդիզմը մի եւ նոյն սառակութեամբ եւ երեւոյթներով տեղի չէ ունենում ամեն արարածների վերայ եւ կանայք աւելի ենթակայ են այս բնախօսական վիճակին։ Օրինակները բազմաթիւ են. դօկտ. Կերինօ յաջողութիւն ունեցաւ մի վիրաւորեալի դիսաը կտրել հիւանդիզմով թմրեցնելով նորան, 1852-ին անգղիացի մի վիրաբոյժ մի կարեւոր գործ հրատարակեց հետեւեալ վերնագրով «Մադնիսական-

նութիւն եւ հիւանդիզմ բժշկական եւ վիրաբուժական արուեստների մէջ»։ Այս դիտական տեսրը մեծ յեղափոխութիւն յառաջ բերեց եւ մի նոր հորիզոն բացեց դիտական աշխարհի առաջ ապացուցանելով թէ վիրաբուժական գործողութիւնները այնուհետեւ պէտք է հեշտանային ի շնորհս հիւանդիզմի։ Ընդհատատանում հեղինակ վերաբոյժը 200 գործողութիւններ կատարեց հնդիկների վերայ մագնիսացնելով նոցա հետեւեալ եղանակով. վիրաւորեալին պառկեցնում էր բաւական ցած անկողնի վերայ մի մեծ սենեակում, սեւամորթ մի ծառայ ոտքի վերայ կանգնած անկողնու ծայրին ծռելով իր դէմքը հիւանդի դէմքի վերայ, մի քառորդ կամ կէս ժամ ձեռքի շարժումներով շօշափելով վիրաւորեալին ենթարկում էր թըմրութեան եւ վիրաբոյժը կարողանում էր այնուհետեւ շարունակել իր գործողութիւնը։

Ամեն երեկո վանականները անդամ հիպնոտիզմի էին ենթարկում մի ժամանակ, դիտելով ուղղակի հնազանդի պարտը։ Հոգևկատարի ցանկությունները թմրեցնում էին ենթարկում նրանց մի քառորդ ժամ շարունակ նրանց քթի ծայրը դիտելուն։ Այդ որոշված ժամանակամիջոցից յետոյ առաջին թե կատարյալ քուն էր երևում նրանց քթի ծայրին եւ հնազանդի ցանկությունները կատարելու էին նրանց ապագա կացութեամբ բազմութեան յարգանքն եւ հիացմունքը վայելելու։

Ակնատեսները պատմում են թե հանրային ծեսերին եւ վաճառականություններում տան եւ երկու պատանեք նստում են շրջանակաձեւ դիտանի վերայ եւ լարած ուշադրութեամբ լսում են նրանց շրջապատող երաժիշտների պարզական թըմբուկի ձայները։ Պատանեքը սկսում են գոռալ գլխի եւ ոտքերի շարժումներ երաժշտութեան համեմատ, որով սկսում են շատ շուտ թմրել եւ քրտնաթոր դէմքով, կարմիր եւ պատառատուկից աչքերով եւ թմրած ուղեղով փրփուր են դուրս բերում իրենց բերաններից եւ այդ վիճակի մէջ այդ տարօրինակ մարդիկ ծանկում են նրանց այրը հրաշէկ երկաթով եւ սուր պէնքով եւ հալած ապակի են կուլ տալիս առանց արտայայտելու վշտի եւ ցաւի ամենափոքր նշան անգամ։

1863-ի վերջերս ամեն գահիրէից դօկտ. Ռոսի մի նամակ է ուղղել Փարիզի բժշկական օրագրին, որից տեղեկանում է այն տարբեր եղանակները, որոնց դիմում էին Ջիպտոսի վհուկները անզգայ քնի մէջ մնալու համար։ «Մանդէլ կաչուած ցեղի պատքները վերցնում են վաւերական ամբողջութիւն սպիտակ մի պնակի, պնակի մէջտեղը թոնրաքով գծում են իրարու մէջ անցած խա-

չածեւ երկու եռանկիւններ, հա-
ւանականաբար կետրոնացնելու ակ-
նարկը սահմանաւոր մի կէտի վերայ,
յետոյ սնակի մակերեսի փայլը աւե-
լացնելու համար մի փոքր իւղ են
թափում մէջը, Ընդհանրապէս իրենց
փորձերի համար ընտրում են մի ե-
րիտասարդ եւ հաստատել են տա-
լիս նորա ակնարկը խաչաձեւ կրկնա-
կի եռանկեան կենտրոնի վերայ, Են-
թական սկսում է տեսնել մի սեւ
կէտ սնակի մէջ տեղ, մի քանի
վայրկեանից յետոյ այդ սեւ կէտը
մեծանում է, փոխում է իր ձեւը եւ
տարբեր երեւոյթներ է ստանում
որով փորձի ենթարկուողը թմրում է,

Երբ այսքան հետաքրքիր եւ հետ-
նալի օրինակներ եւ իրողութիւն-
ներ ներկայանում են մեզ, կարող
ենք մի գաղափար ստանալ հիպ
նոտիզմի վերայ, եւ արժէր, որ
գիտութիւնը իր ուսումնասիրութեան
առարկայ դարձնէ հիպնոտիզմը գի-

տութեան հրաշալիքների թիւը բազ-
մապատկելու համար,

ՀՈՎՀԻՆ ՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՆ

Մի ծերունի տգէտ հովիւ գիտնա-
կան մարդու համբաւը վայելում,
Մի փիլիսոփայ լսելով նորա համ-
բաւը՝ ուզեց տեսնել նորան եւ
ծաղրել, գտաւ նորան եւ փոքր
ինչ խօսելուց յետոյ՝ սկսեց բուն
նիւթի վերայ խօսել,

—Լսել եմ, որ դուք իմաստուն
մարդու համբաւ ունիք,

—Գիւղի մէջ ունիմ այդպիսի մի
համբաւ, որին արժանի չեմ,

—Անտարակոյս դուք այդ համ-
բաւը ստացել էք հեռաւոր երկրներ
ուղեւորութիւններ կատարելով,

—Ո՛չ, պարոն, ես գիւղից դուրս
չեմ եկած,

—Ուրեմն ճանաչում էք Պղատոնին,
Սենեկային եւ Պասքալին . . .

—Երբեք, Այդ մարդկը ինձ բոլորովին անծանօթ էր եւ ոչ էլ նոցա բնակարանները գիտեմ։

—Ուզում եմ ասել գիտնականների գործերը կարդացել էք անշուշտ։

—Այո, մանկութեանս ժամանակ մեր գիւղում ոչ գպրոց կար եւ ոչ դաստատու, ոչ կարդալ եմ սովորել եւ ոչ գրել, բնութեան մեծ գրքի մէջ եմ միայն կարդում։

—Փա՛ռ, ասաց փիլիսոփան, բնութեան մեծ գրքի մէջն էք կարդում..., Բայց ինչ կարող էք հասկանալ այդ գրքից եթէ մէկը ձեզ չը բացատրէ,

—Ձեր հարցը շատ տարօրինակ է թւում ինձ, Մինչեւ Ամենաբարին Աստուած աշխարհս ստեղծած ժամանակ չը գրեց այնտեղ նշաններ, որոնք յայտնապէս ցոյց են տալիս եւ հաստատում իր գոյութիւնը, Ո՞ չ ոգաքէն բնութեան մէջ կան քիւր ձայներ հրահանգիչ, որը տըղամարդկանցներն անդամ կարող են հեշտութեամբ հասկանալ։

—Այդ խորհրդածութիւնդ ճիշտ է,

—Ես ճշմարտութիւնը ուրիշ տեղ փնտռած չեմ, որովհետեւ սիրտս ապաստան ինձ, բայց աշխատած եմ գտնել այն արարչագործութեան գանազան տեսարանների մէջ։

Արեգակը յիշեցնում է ինձ Աստուած, երկնքի Արքան, որ առաւել առաւտութեամբ շնորհում է մեզ իր պարգեւները՝ քան արեգակը իր ճառագայթներով եւ իր կենսատու տաքութեամբ,

Երկրի արդասաւորութիւնը եւ եղանակների զանազանութիւնը յիշեցնում են ինձ Նախախնամութիւնը, որ այնքան առատաձեռն մատակարարում է մեր բոլոր պէտքերը,

Սակայն ոչ մի բան երբէք այնքան աղդեցութիւն չունի ինձ վերայ, որչափ երկինքը գիշեր ժամանակ, Ինչ հեշտութեամբ եւ զմայլանքով մինչ ննջում է հոգս շունս պահպանութեան տակ, զննում եմ այն կապոյտ ան-

տեսնում միթէ ցորենի հատիկը, որ մեռնում է հողի մէջ եւ կրկին կեանքանում բազմապատիկ. եւ թըռչունը, որ դուրս է գալիս իւր բոժոժից արծաթափայլ եւ ոսկեթեւ կերպարանքով... Այսպէս եւ ես պէտք է վերկենդանանամ եւ արդէն ողջունում եմ այն մեծ օրը, երբ արդարները պէտք է յարութիւն առնեն փառաւորեալ, երկնային երջանկութեան մասնակից լինելու համար։

Հովիւը լուեց, միշտ խորհելով երկնքի վերայ, փիլիսոփան մեկնեց յայտուշ կրթեալ. գնաց ինքն էլ կարգալու բնութեան մատեանը. որ մարդկային ազգի իմաստութեան անըսպառ եւ յարդաւատ աղբիւր է։

ՅԱՂԹԱՆԱԿ ԸՆԴԴԻՄ ԱՆԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆ։

Անաստուածութիւնն է Աստուծոյ համ գերագոյն իմացական էակի

սահման կամաքը, ուր ցանուած ցրուած են աստղներ, եւ նոցա մէջ լուսինը արծաթեայ ճաճանչներով։

Ո՞վ, ասում էր շատ անգամ ես ինքս, ո՞վ դրեց երկնքի բարձրութեան մէջ այն աստղերը, որոնք դառնում են լրահոլով եթերեւ մի բանակ մի դշխոյի հրամանատարութեան ներքեւ . . . եւ այն ժամանակ միտքս բարձրանում է, սաւառնում է մինչեւ այն միւս երկինքը, ուր Աստուած հաստատած է իր գահը եւ ուր սրբերը առաւել լուսափայլ քան աստղերը՝ վայելում են անվախճան երջանկութիւն։

—Բայց դուք հաւատում էք այդ երջանկութեան։

—Անշուշտ, որովհետեւ բացի բնութիւնից կրօնն էլ է մեզ ապահովցնում։

—Յիշա ունինք թէ վերստին պէտք է յարութիւն առնէք։

Այո՛, ըստ վարդապետութեան կրօնի եւ նոյն իսկ բնութեան, զի

գոյութեան չը հաւատալը։ Շատերը թէ հին ժամանակներին եւ թէ այժմ կեղծելով անաստուածներ են ձեւացել աշխարհի առաջ. բայց խնդիր է, թէ արդեօք որ եւ է խելքը գլխին ունեցող մարդ իսկապէս կարող է որդեգրել այսպիսի մի սկզբունք։ Ուստի այս կեղծիքները պէտք է որ հիմնուած լինին հպարտութեան եւ կամ արուեստականութեան վերայ։ Ս. Գիրքը ստվերցնում է, թէ անդրանիկ անաստուածը եղել է մի յիմար եւ անըզդամ մարդ, որ յանդգնել է ասելու թէ «Ոչ Գոյ Աստուած» Սաղմ. ԺԴ. 1, բայց այն էլ իր սրտի մէջ, ասաց ի սրտի իւրում» եւ ոչ թէ մտքի մէջ, որովհետեւ Աստուած բնութեան մէջ ոչ մի տեղ առանց ապացոյցի չի թողել Իր գոյութիւնը, ուստի եւ միտքը չի կարող համոզուել «Ոչ Գոյ Աստուած» գաղափարի հետ։

Բնութիւնն անուանքն մի նշանաւոր աստղաբաշխ մի բարեկամ է ունենում, որ հպարտութեամբ կրինելիս է լինում յաճախ թէ «Ոչ Գոյ Աստուած» եւ պարծենալիս իր մեծ սկզբունքով։ Բնութիւնը կամենալով լռեցնել հակացնել նորան իր սկզբունքի անտեղութիւնը. հետեւեալ հնարքն է գործ գնում։ Մի օր, երբ իր անաստուած բարեկամը այցելութեան պէտք է գար իրեն, Բնութիւնը իր գրատեղանի մէջտեղը դրած սեղանի վերայ ըստ կարգին զետեղեց արեգակնային գրութեան այլ եւ այլ գնդերը, որոնք պատկեր են իսկականի եւ ապա նոցա, որոնք սկսեցին դառնալ արեգակն շուրջը դառնալով միանգամայն ամեն մինը իր առանցքի վերայ։ Այս անելուց յետոյ ինքը նստելով իր գրատեղանի առաջ սկսեց ղբաղուել իր գործով։ Մտաւ բարեկամը, բայց

Քըչըլը ուշադրութիւն չը դարձրեց, բարեկամը փոքը ինչ կանգ առնելով եւ ղմայլմամբ դիտելով սեղանի վերայ դետեղուած գնդերի շարժումները դոչեց, ինչպէս գերեզիկ են եւ ձեմ համար էք պատրաստել այս սքանչելի տեսարանը, Քըչըլը դառնալով դէպի բարեկամը ասաց, ոհ բարեկամ բարեաւ եկաք, այդ ձեր տեսածը ոչ այլ ինչ է, եթէ ոչ դիպուածական մի սքանչելիք, որ բնութիւնն է յառաջ բերել։ Բարեկամը պատասխանեց, Մի ծալրէք ինձ ձիմարի տեղ դնելով, անտարակոյս դուք ինքներդ էք դետեղել դոցա, ասացէք խընդրեմ ձեմ համար, Ան ժամանակ Քըչըլը մատով երկինքը ցոյց տալով ասաց, ձիլ դրեց արեգակը, լուսինը, աստղները եւ մոլորակները իրենց տեղիներուն մէջ եւ ձիլ կարդադրեց նոցա շարժումները անխափան կատարելու, Եթէ դիպուած եւ բնութիւն այս սեղանի վերայ ձեր տեսածը չեն կրնար կատարել, այդ անհունութեան մէջ տեսածդ սքանչելիքները ինչպէս կատարեցին,

Յոնաթհուեց բարեկամը Քըչըլըի առաջ յաղթահարուելով եւ ճանաչելով իր մոլար սկզբունքը, եւ խոստովանուեց թէ, արդարեւ գոյ Աստուած որ սքանչելիքներ է դործել եւ դործում է հանապազ,

---

Եթէ իմացականութիւն ալէտը է նիւթին շարժում եւ ներդաշնակութիւն տալու համար, եթէ իմացականութիւն ալէտը է բնազդը ստեղծելու համար, առաւել մեծ իրաւամբ իմացականութիւն ալէտը է իմացականութիւն տալու համար,

ՄԵՆՔ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ

Որպէս պի բարձրանայ հոգին, կարիք չը կայ, որ մարգս իմանայ այն ամենը, ինչ որ գիտեն գիտնականները, կարիք չը կայ ամենեւին, որ մի հասարակաւ լինի մարգս մըտքովս պահելու եւ գգալու այն բոլոր մեծ գաղափարները, որոնց մէջ ամփոփուած են մեծ գիւտեր եւ որոնք իրենց մէջ բովանդակում են համայն գիտութիւններ եւ փիլիսոփաների խորհուրդները. Ոչ թէ գիտութեան քանակն է, այլ որակն է, որ որոշում է մարդի արժանիքը. Անհուն ծանօթութիւններով մեր-ըած մի մարդ, բայց չունենալով մեծ ու գերազանց գաղափարներ, կարող է շատ սուր լինել իմացականութեամբ մի հասարակ գործուղից, որ թէեւ չունի գիտութիւն ունենալ, սակայն ըմբռնած լինի մեծ հմտութիւններ. Օրինակի

համար, կարիքը չի ամենեւին, որ մինը աստուածաբանութիւն սովորի վազելի լեզուներով, հասկանալու նախնի հարց գրուածները. Ամբողջ աստուածաբանութիւնը թէեւ ցըրուեալ անհամար հատորների մէջ, ամփոփուած է Աստուած բառի գաղափարի մէջ, եւ թող այս գաղափարը շողայ պայծառ ու յստակ մարդու հոգու մէջ. այն ժամանակ աստուածաբանական բոլոր գրատների էութիւնը եւ գեր ի վերոյ մի լոյս կուներնայ իր մէջ. քան հազարաւոր համբաւաւոր արուեստալ աստուածաբաններ. Մեծ միտքը կազմակերպվում է մեծ գաղափարներով եւ ոչ թէ անթիւ չնչին ծանօթութիւններով. Կան շատ ուսումնագէտներ եւ աստուածաբաններ, որ շատ ազքատ են իմացականութեամբ, որովհետեւ չունին վսեմ խորհուրդներ. Ի՞նչ օգուտ երբ մինը սովորի յունական եւ հռովմէ-

ական պատմաբանների ամենաչնչին մանրամասնությունն անգամ, եթե այդ պատմաբաններով, ազատութեան, գեղեցկութեան, վեհափառութեան եւ ոգեկան գործունէութեան մեծ գաղափարներ չեն բացավառում իր հոգին իբրեւ հուր կենդանի, Դարուս լուսաւորութեան աստիճանացոյցը գիտութեան քանակի մէջ չէ, այլ լայնարձակ եւ վեհ սկզբունքների ու գաղափարների մէջ,

ՄԻ ԿՈՑՐ ՊԱՏԱՆՈՒ ՎԻՇՏԸ

Ասում են թէ՝ քաղցր է տեսնել առաւօտը երբ ծագում է արեւը, այն շառագոյն պայծառութիւնը, որով արեւելքը փայլում է վառ ի վառ, որի նախարձակ ճառագայթները ոսկեզօծում են լեռների գագաթները եւ տաճարների գմբէթները, ցողը, որ մարգագետնի խոտերի վերայ շողում է մարգարտատիպ, բայց սոցա չը տեսնելը՝ չէ վշտացնում ինձ այնքան,

Ասում են թէ՝ սիրալի է ծովի տեսարանը, որը ցերեկը արեգակի ճառագայթների տակ փալփլում է լուսակայլ իբրեւ ոսկի հեղուկ եւ գիշերը իր մեղմաճոխի ծոցի մէջ նիրհում է աստղների ու լուսնի շողը, որը իւր հանդարտութեամբ երբեմն նման է միապաղաղ հայելու եւ երբեմն մրրկայոյզ կոհակներով մունչում է զայրագին եւ լեռնակուտակ փրփրելով ծովեզրի ապառաժների վերայէ յարձակվում ուժգնութեամբ, բայց սոցա չը տեսնելը՝ ինձ չէ վշտացնում այնքան,

Ասում են թէ՝ գեղեցիկ է բնութիւնը գարնանը եւ թէ զմայլելի է տեսնել վարդը, որ բացվում է իր ծղօտի վերայ. ծառերը տերեւազարդ սէնեակաձ. դալարագեղ դաշտը, որի վերայ բազմագունեան

ծաղիկներ են սիրուած իբրեւ մի կանաչ պատմուճան զարդարող գոհարներ. գոյնզգոյն թիթեռնիկները, որոնք իբրեւ ծաղիկների թեւաւոր եղբայրներ թռչկոտում են օդի մէջ. կամ հանգիստ են վայելում իրենց հարազատների գրկերի մէջ. բայց սոցա չըտեսնելը՝ ինձ չէ վշտացնում այնքան,

Ասում են թէ յափշտակիչ է երկընքի տեսիլը. վերացնում է մարդուն եւ վաեմ խորհուրդների մէջ է ընկղմում մարդկային միտքը. թէ երբ արեւը փայլում է լուսակէզ ճառագայթարձակ, թէ երբ մթագնում է ամպերի քօղերի ներքեւ, որին փայլատակներ եւ շանթեր սպառնում են ահարկու կերպով. եւ թէ երբ արեգական մայր մտնելուց յետոյ լուսաւոր մարմինները փթթում են իբրեւ երկնային ծաղիկներ եւ կամ փայլում են իբրեւ մէկ մէկ կանթեղներ եւ կամ իբրեւ լուսնի նաժիշտ

ներ շտապում են շուրջ զնել գիշերուան թագուհուն, որ արեւելքից դուրս գալով գալիս է նազելափայլ ճեմելու երեքի դաշտերի մէջ. եւ ամպերի բարակ մի շղարշ ճգած ճակատին արձակում է աչքերից մեղմիկ նշոյլներ. բայց սոցա չը տեսնելը՝ չի վշտացնում ինձ այնքան,

Ինչ որ առաւել քան զամենայն վշտացնում է սիրտս եւ զգացնում է ինձ կոյր ծնուած լինելու դժբաղտութեան մեծութիւնը, այն ոչ առաւօտը, ոչ ծովը, ոչ գարնունը եւ ոչ երկինքը դիտելու հաճոյքներից զրկուելն է. այլ այն է, որ ահ, աւաղ, չեմ կարողանում տեսնել հօրս եւ որ առաւելն է՝ անուշ մօրս երեսը,

---

ԱՋԵՐԻ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ ՊԱՇՏՊԱՆԵԼ.

Այս թանկագին զգայարանը երկար ժամանակ պահպանելու համար պէտք է գործադրել հետեւեալ ըզգուշութիւնները.

Զգուշանալ յանկարծակի մթից դէպի լոյս անցնելիս։

Վէրնէրին չը կարդալ, երբ օրը տարաժամ է եւ մութ։

Չը պէտք է այնպէս պառկիլ, որ զարթնելու ժամանակ լոյսը յանկարծ աչքերին ընկնէ։

Չը պէտք է կարդալ կամ աշխատել ճրագը դիմաց ունենալով, ամենալաւ եղանակն է լոյսը բարձրից եւ ձախակողմ ունենալ։

Չափազանց լոյսը վնասում է աչքերին, երբ աչքերի յոգնութիւն է զգում մարդս, գիրքը կամ ձեռագործը պէտք է թողնէ եւ հանգստանայ։

Կապոյտ երկինքը եւ կանաչազարդ երկիրը կարծես զգացնում են մեզ կապտադոյն առաստաղի, կանաչ գորգի եւ սոցա նման գոյներով պատկերներ ունենալու կարեւորութիւնը։

ԳՈՅՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Գոյները մեծ ազդեցութիւն ունին առողջութեան վերայ, բնակութեան եւ պառկելու սենեակները պէտք է գունաւորել այնպէս, որ մարդուս առողջութիւնը չը վնասուի։ Գոյների մէջ ամենից առողջարարը սպիտակն է համարուած։ Սեւ եւ դեղին գոյները ընդհանրապէս վատ ներգործութիւն են ունենում առողջութեան վերայ։ Մի գոյնծաղանճատէր երկար ժամանակ դիտում է եւ գտնում է, որ մեկ սենեակի մէջ աշխատող կանայք միշտ առողջ եւ ուրախ էին, իսկ նոյն գիրքը ունեցող ուրիշ սենեակի մէջ նոյն գործը գործողները ամենքն էլ բացի մեզամաղձոտ մի վիճակ ունենալուց երեսից ճակատի եւ աչքերի մէջ ցաւ են զգում։ Սենեակների իրարուց ունեցած տարբերութիւնը այն էր միայն, որ առողջ եւ ուրախ կանանց բնա-

կածի պատերը ղուտ սպիտակ՝ իսկ միւսի պատերը դեղին էին ներկուած։ Գործարանատէրը դպրոցները հասկանալով անմիջապէս բոլոր սենեակները սպիտակ գոյնով ներկել տուեց եւ իսկոյն նկատուեցաւ, որ գործաւորը կանայք ամենքն էլ սկսեցին ղուարթանալ եւ առողջանալ։

ՆՇԱՆԱԻՈՐ ՀՆԴԻՆԱԿՆԵՐԻՑ

Ուսումն ու գիտութիւնը բարի մարդու ձեռքին թագաւորական գաւազան են, իսկ չարերի ձեռքին աւազակների լախտ։

Մոնտաճոր.

Մարդու կարծիքը իր ծոցի ժամացոյցի նման է, ինչպէս որ այն ուրիշների ժամացոյցներին նմանեցնելու համար երբէք կամ առաջ չի տանիլ ամեն ժամանակ, այնպէս էլ իր կարծիքը ուրիշների կարծիքների հետ չի ուզիլ յարմարեցնել։

Փոփ.

Երբեմն մարդս աւելի գիւրին կերպով խելք է սովորում ձախորդութեան հանդիպելով, քան թէ շարունակ յաջողութիւն տեսնելով։ Շատ լաւ քան է չարիքից բարիք հանելը, որովհետեւ չարիքը սովորական է, իսկ բարիքը խիստ սակաւագիւտ։

Պասկալ.

Ընութիւնը ինչպէս իր ուշեցած բարութիւններով ցոյց է տալիս լինել պատկերը Աստուծոյ, այնպէս էլ իր պակասութիւններով ցոյց է տալիս, թէ միայն պատկերն է եւ ոչ աւելի։

Պասկալ.

Ով որ մարդկանց հաճոյ լինել չի փափագում, ան որ մարդկանց անհաճոյ լինելուց չի երկնչում, նորա հանգստութեանը չափ չը կայ։

Թոմաս Գեմբացի.

Մեծամեծ ճշմարտութիւններին խելք հասցնելու համար, հարկաւոր

Է սակաւ ինչ կարգից դուրս տաքութիւն, որովհետեւ կարելի է վիճաբանիլ սառնութեամբ. բայց չի կարելի գտնել նոր գիւտ, Տաքութիւն եւ ճշդութիւն հանգամանք են փիլիսոփայութեան.

Վոլնարի.

Մօրս դաստիարակութեան ոճը ոչ թէ արուեստ, այլ սէր էր, եւ վաստնորոյ անսխալ էր:

Լամարթին

Ամենամեծ եւ սպառնական ճշմարտութիւնները միայն կրօնական ճշմարտութիւնների լուսով կարող են պարզուիլ.

Էմի Մարթեն.

Մեծ բարկի է փառքը, բայց առաքինութիւնը ամեն բարկից եւ փառքից մեծագոյն է.

Պլինդարոս.

Առանց ուսանելու չի կարելի առաքինութեան մէջ կրթուիլ.

Պուտարխոս.

Ճշմարիտ բարեկամ կը համարուի նա, որ իր բարեկամի ուրախութեան ուրախակից, ցաւին ցաւակից եւ թերութիւններին ներողամիտ է.

Պամոն.

Ճշմարտութիւնը թագաւորում է երկնքում եւ նորա իշխանական աթոռը Աստուծոյ կրծքի մէջն է.

Պօսիւէ.

Սիրէ միայն Աստուած, ատէ միայն քո եսդ.

Պասքալ.

Իրական հաւատքի մէջ սրտի տագնապ չկայ.

Ս. Ամբրոսիոս.

Ամեն մի վայրկեան բերում է մեզ համար իր թեւերի վերայ Աստուծոյ բարութիւնը.

Ս. Քրանսիս

Սիրուց եւ սիրով շարժուած զգայութիւնները նման են փայլակին, որովհետեւ չը գիտես թէ նախ քան փղձկիլը որի վերայ պէտք է փայլեն.

Լագրանժ.

Դրացիների հետ բարութք կենցաղավարութեան միակ միջոցն է, յիշել նրանց յաճախ Աստուծոյ առաջ, եւ մուռացութեան տալ նոցա թերութիւնները մարդկանց առաջ։

Մատիկեան.

Աստուծոյ եւ մարդկանց մէջ, աւետարանի եւ ամեն մի հոգու մէջ անսխալ թարգմանը սէրն է։

Վիլնէ.

Աստուծուց մեզ վերայ հաստատած օրէնքները մեզ համար մի քեռ են եւ մի եւ նոյն ժամանակ հանդիստ, մի լուծ են եւ միանգամայն յենման նեցուկ։

Պուրտալու.

Խնամութիւնը այն թուչունին, որ ծառի տակը ամէն վերայ թառելով երգում է անուշ, եւ խնամալով հանդերձ թէ իւր թառած տեղը ճիւղը հակած է դէպի ցած, շատունակում է անվիհեր իր դայլայ

լը, որովհետեւ գիտէ նաեւ թէ թեւերը ունի։

Վ. Հիւկո.

Մեզ մոռանալու լաւագոյն եղանակն է աղօթել ուրիշների համար։

Լօպսիեն.

Սիրեր Աստծուն եւ ապա արա ինչ որ կամենում ես անել։

Ս. Օգոստինոս.

Քրիստոնէութիւնը պաշտպանում է աշխարհը Աստուծոյ բարկութեան դէմ։

Վիլնէ.

Աղօթքի չքնութիւնը փորձութեան դադարութիւն է հրաւիրում։

Պասկալ.

Ով որ չի աղօթում, չի էլ ապրում։

Պասկալ.

Պատմութիւնը ճշմարտութեան լոյս, յիշողութեան կեանք, կեանքի վարժոց եւ հնութեան սուրհանդակն է։

Կիկիրոն.

ԽՐԱՏԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ·

—Սոկրատէս փիլիսոփան իր ծառային վերայ բարկանալով ալէտք է ծեծէը ներան, բայց յիշելով թէ բարկացած է՝ հանդարտելով ասաց ներան, «պէտք է ծեծէլ քեզ եթէ բարկացած չը լինէի»·

—Գինամոլներին եւ բարկացողներին խրատ էր տալիս Պղատոնը, որ հայելու մէջ նայեն, որպէս ղի իրենց դէմքի այլանդակութիւնից հասկանան իրենց հիւանդութիւնը եւ ուղղուեն·

—Ջենոն փիլիսոփան շատախօս մի տղայ տեսնելով ասաց ներան, թէ մենք նորա համար երկու ականջ ունենք եւ մէկ բերան, որ շատ լսենք եւ քիչ խօսենք, բայց դո ականջներդ էլ լեզու ես եղել·

—Մի շատախօս ծեր դեսպան մի օր զարդարուած ու մաղերը ներկած ներկայանալով իր թագաւորին՝ սկսեց

երկար խօսել· Ինչ ճշմարիտ խօսք կարող է ասել այն մարդը, որ ոչ թէ միայն սիրտը, այլ եւ գլուխը ստով լցուած է ասաց թագաւորը·

—Մի չարագործ մարդ մի տուն շինեց եւ դրան վրայ դրեց, թէ «չարագործ մարդ ներս չը մտնէ»· Դիոգենէս փիլիսոփան երբ որ տեսաւ ասաց, թէ «դրա տէրը նրտեղից պէտք է մտնէ»·

—Հերոնիմոս ճարտասանին աշակերտները մի օր հարցրին, թէ այդչափ բան գիտես, ինչո՞ւ համար աղքատ ես, Պատասխան տուաւ թէ զարմանք բան չէ, որովհետեւ ամեն բան սովորել եմ, բայց արծաթասիրութիւն չեմ սովորել·

—Մի փիլիսոփայ տուն շինեց, բայց հիմքը վերեւ դրեց եւ առաստաղը ներքեւ, երբ հարցրին պատճառը՝ ասաց, թէ աշխարհք պէտք է մտնեմ, եթէ երկոզ կինը տունս տակնուվրայ անելու լինի, այն ժամանակ կուղղուի·

— Մի փոքրիկ տղային հարցրին թէ Աստուած քանի է, մէկ է, պատասխանեց տղան։ Դարձեալ հարցրին թէ ինչպէս գիտէ թէ մէկ է, որովհետեւ ասաց տղան, միայն մէկի համար տեղ կայ եւ նա է լցնում երկինքն ու երկիրը։

— Մի տղէտ մարդու հարցրին, թէ ինչպէս գիտէ Աստուծոյ գոյութիւնը, պատասխանեց, ինչպէս աւազի վերայ տեսնուած ոտքերի հետքերից կարող եմ հասկանալ թէ մարդ թէ անասուն է անցել այնտեղից, այնպէս էլ Աստուած Իր գործերից եմ տեսնում։

— Մեծն Կոստանդիանոս երբեմն ինքնակալն ասում էր, իմ կեանքս հովիւների կեանքից մի փոքր յարդի է, բայց նոցա կեանքից շատ դժուար է։

— Պղատոն փիլիսոփան երբ իր մի բարեկամի միջոցով լսեց թէ իր վերայ վատ են խօսում ուրիշները,

հոգ չէ ասաց, ես պէտք է աշխատեմ այնպէս կենցաղավարիլ, որ ոչ ոք հաւատայ նոցա ասածներին։

— Անտիգոնոս Ասորեստանի թագաւորը լսելով որ իր զինուորներից երկուսը վրանի ետեւ կանգնած իրեն բամբասում են, վրանի վարագոյրը քանալով ասաց, բարեկամներ, մի փոքր հեռու գնացեք, որ թագաւորը ձեր խօսքերը չը լսէ։

— Մի օր երբ Ալկիբիադէս պարծենում էր իր հարստութեան ու տիրած երկրի մեծութեան վերայ, Սոկրատէս մի աշխարհացոյց տանելով նորա մօտ խնդրեց որ նորա վերայ ցոյց տայ Ատտիկէն, Հազիւ թէ տեսանելի էր թղթի վերայ այն երկիրը, բայց մեծ աշխատութեամբ վերջապէս գտաւ։ Սոկրատէս երբ վերստին խնդրեց, որ նորա վերայ իր տէրութեան սահմանները գտնի եւ ցոյց տայ, Ալկիբիադէս ասաց

թէ այնքան փոքր է, որ այսպիսի փոքրիկ աշխատասիրոյցի վերայ չի կարելի դանել։ Փիլիսոփան պատասխանեց, նայելը թէ որքան հսկարատնուտ ես անզգալի մի կէտի չափ ունեցած երկրեդ վերայ։

—Լուսնիմաքոս իր սաստիկ ծաքաւութիւնը յայտնելու համար, թագաւորութիւնը տուեց կնդէասին, ջուրը խմելուց յետոյ այս խօսքերն ասաց, ոհ, վայ ինձ, որ այսպէս վայրկենական հեշտութեան համար մի մեծ թագաւորութիւն կորցրի։

—Նիւթապաշտ մի անհատատ անտերի խօսքերով ուղում էր ցոյց տալ թէ մարդիկ հոգի չունին, ձեռոյ իր այս մեծաքանութեան ունկնդիրներից մի տիկնոջ հարցրեց, թէ ինչ է մտածում իր այս փիլիսոփայութեան վերայ։ «Պարոն», ասաց տիկինը, «ինձ թվում է թէ քո այդ փիլիսոփայական արհեստի տաղանդովդ աշխատեցիր մեզ հաստատելու, որ մի անքան անսատուն ես առանց հոգու»։

—Կոստանդիանոս մեծ ինքնակալը, իր տղան գնր գրել սովորեցնուն ալէս, նորա ձեռքով էր գրում իր ներողութեան հրովարտակները, եւ իրեն համար մեծ հաճոյք էր իր տղայի բերանով իմացնել, երբ մեկին մի շնորհ պէտք է անէր։—Ծնողները այսպէս իրենց դէռահաս զաւակներին պարտական են սիրոյ եւ ողորմութեան գործ անել տալ սովորցնել։

ԻՄԱՍՏԱԼԻՑ ԸՆՏԻՐ ՄՏՔԵՐ։

Ուրիշները որչափ էլ մեզ հետ անխրաւաբար վարուին, մեզ պէտք չէ անիրաւ եւ վրէժխնդիր լինել։

Քաղաքացու առաջին առաքինութիւնն է հնազանդութիւն հայրենիքի օրէնքին,

Ճշմարիտ՝ վատը առաքինութիւնն է։

Մարդ միշտ իր՝ կրքերի հետ պէտք է կռուէ եւ՝ ուրիշների կրքերին խաղաղութեամբ պէտք է վերաբերուի։

Երջանիկ լինելու համար պէտք է մարդս լինի լաւ աղգական, լաւ քաղաքացի, —

Մեծ թերութիւնները մեծ մարդկանց սեպհականն են։

Կան ոչ սակաւ մարդիկ, որ յարգվում են եւ ատվում դեռ չը ճանաչուած։

Նախանձը փոքրոդիների քաժինն է, եւ հպարտութիւնը նուաստ մտքերի։

Գութը առանց սիրոյ մի աղբիւր է առանց ջրի։

Ցոյսը երազների քաւերագոյնն է եւ մխիթարանքն պիտանի, առանց հաճի հնար է ապրել, բայց առանց յուսոյ՝ ոչ։

Գեղեցկութիւնը առանց առաքինութեան մի անբոյր ծաղիկ է։

Անձնասիրութիւնը ամենամեծ շողոքորթն է։

Աշխատութիւնը հեռացնում է երեք մեծ չարիքներ, ձանձրոյթ, աղքատութիւն եւ մոլութիւն։

Ամենեւին մի ուրախանար մէկի դժբաղդութեան վերայ։

Ջեզանից աւոր եղողներին մի արհամարհիր։

Տգէտների եւ յիմարների հետ ցաւակից եղիր խօսիր։

Ջուներացածդ առաքինութիւններովդ երէք ժողովուրդը քեզ գովէ, ղգուշացիր հպարտանալուց եւ արտիւր։

Այն գործը որ չես կատարել, մի խոստանար։

Անօգուտ եւ վնասակար խօսք մի խօսիր։

Խմաստունները եւ արուեստագէտները մեծարիր։

Շողոքորթութեան ունկնդիր մի լինիր եւ մի ախորժիր։

Ողջախոհութիւն եւ նախանձ գործ դնել մի մտածիր։

Մի որ եւ է գործի ստոյգը չիմացած մի պնդիր։

Համբերութեան վախճանը խաղաղութիւն է, եւ անհամբերութեան վերջը տարբութիւն։

Պարտականութիւնները առաքինութիւնների մատակարարն են։

Գթութիւնը սրտի տենդն է. բայց նորան յաջորդող բարեսիրութիւնը նորա դարմանն է։

Երջանիկ չէ նա, որ–ընաւ եղած չէ ապերջանիկ։

Ցառապանքը կեանքի աղն է. ինչպէս սէրը հոգւոյ մննունդը։

Մէկ յանդիմանիր եւ մի քամահասիր ընկերդ այն քանի մէջ, որի մէջ անպարտ չես եւ ինքդ։

Միամիտը հարցն բառերին է պատասխանում. իսկ խորագէտը հարցի ոգուն։

Ցոյսը սիրտը անցեալի վախանքն է եւ մուխ ապագայի բանալին։

Շուն կայ, որի լեզուն վերք է բուժում, մարդ կայ, որի լեզուն վերքեր է բանում։

Ուր յոյս կայ, այնտեղ կեանք կայ, ուր կեանք կայ, այնտեղ յոյս կայ։

Նապոլէօն սովոր էր ասել, թէ իր բանակի բարոյական ազդեցութիւնը իրեն համար 40·000 զօրքից աւելի արժէ։

Բաղդը միայն նոցա է նպաստում, որոնք օգնում են իրենք իրենց, իրենց բուն ջանքերով։

Ժամանակը քանդում է շէնքեր. իսկ լեզուն արգելում է շինուելու բաներ։

Երկայնամտութիւնը առաջնորդ է յաջողութեան, իսկ անհամբերութիւնը՝ կարապետ ձախորդութեան։

Նա որ չի կարող զսպել իր կրքերը, նոցա գերին է լինելու։

Բարեհամբաւ նկարագիրը նախամեծար է քան ոսկին եւ պատուական ակները. եւ վարկը՝ մարդուս ամենակարեւոր դրամագլուխն է։

Տիեզերքը Աստուծոյ հրաշալի երկերի չքնաղ հաւաքածուն է, կամ ուրիշ խօսքով, Նորա վերջ մտքի վսեմ բանաստեղծութիւնն է։

Կուզես չափել Աստուծոյ մեծութիւնը, տիեզերքը ձեռքդ առ,

Անկեղծ քաղաքավարութիւնը մարդու անբաժան ընկերն է, իսկ ճշմարտութիւնը նորան վարող հոգին։

Դաստիարակութիւնը գանձ է եւ աշխատութիւնը նորա բանալին,

Գիրքը մի այնպիսի բարեկամ է, որ ոչ կեղծաւորել գիտէ եւ ոչ շողոքորթել,

Բարեկամութեան հաւերը տարացնում է հոգին առանց այն սպառելու։—

Երիտասարդութիւնը կեանքի ծաղիկն է, պէտք է նորա մէջ պատրաստել պտուղը,

Խոստումնը բարկութեան ժամանակ գիտէ իշխել իւր կրքերին,

Վախեցիր այն մարդուց, որի

սրտի մէջ մուրք դատած չէ նախանձմունքի երկիւղը,

Ճշմարտութիւնն է մեր մտքի լոյսը, նա է արգարեւ անխաւնձ հայրերի աղբիւր, մեր յոյսերի հիմը եւ մեր համայն վշտերի դարմանը,

Պատիւն աչքի նման է, որքան ամենայնչնչին անմաքրութիւնն անդամ կարող է եղծանել,

Վարդից աւելի զմայլելի են առաքինի մարդկանց սրտերը, որոնցից շնորհը եւ բարիք են բուրում,

Ոսկին ոսկի է, եթէ ցեխի մէջ էլ ընկնի, նոյնպէս առաքինին՝ ամեն թշուառութեան մէջ,

Կեանքը վարդենի է եւ մարդը մեղու,

Փառը է հոգին, եթէ տեղ չունի պահելու երախտեաց յիշատակը,

Ապերախտութիւնը վատ սրտերի նուաստութեան յատկին է,

Երախտագէտ եղիր, ահա մեծ եւս քան երախտաւորը, ներում խնդրէ, եւ ահա վէհանձն կը լինես քան ներողը,

Ձեհմանձն ես, չես կարող վրէժ լուծել, չես կարող ներել. նուաստ ես։

Իր թերութիւնները չը տեսնողը, չի կարող կատարեալ լինել։

Գարուն եղանակների թագուհին է, ինչպէս երիտասարդութիւնը կեանքի եղանակին։

Որչափ մարդասիրութիւն պէտք է մարմնի եւ հանդերձի, ֆիզիքական ուժը եւ կարողութիւնը անաղարտ պահելու, նոյնչափ աւելի անհրաժեշտ են բարոյական մարդութիւն հոգւոյ կարողութիւնները պարզ եւ վառ պահելու համար։

Աղօթքը հոգւոյ վերքը բուժող բալասան է, երկիրը երկնքի հետ միացնող նուիրական կապն է, գերբնական սահմանների դուռարն է եւ մարդուս ու Աստծոյ մէջտեղ անտեսանելի միջնորդն է։

Երեք կարգի մարդկանցից պէտք է վախենալ, շողոքորթներից, արբեցողներից եւ կեղծաւորներից։

Ցորս կարգի մարդիկ կան, որոնց ընկերութիւնը վնասակար է եւ ժպտալի, հայհոյիչների, անբարոյականների, գողների եւ բամբասողների։

Ամեն մարդու պէտք է յարգել, բայց ամեն յարգածը չի կարելի սիրել։

Փառասիրութիւնը մի ախտ է եւ յաճախ ապականիչ բարոյական աղնուութեան։

Գիտես համբերութեամբ եւ աշխատութեամբ յաղթել ձախորդութիւններին, իմաստուն ես, ճշմարիտ եւ քաջ։

Սէրը հոգւոյ արեւն է, սա առանց նորան կը սառի։

Սէրը մի ներքնաբուղխ աղբիւր է, որից միայն կարող է հոգին յագեցնել երջանկութեան պատակը, առանց սիրոյ հոգին կը ցամաքի։

Ներքին խռովութիւնը աղէտալի է միշտ եւ խաղաղ աւերիչ քան արտաքինը։

Անափառութիւնը նշան է արժանիքի բացակայութեան եւ շատախօսութիւնը՝ մտքի ունայնութեան։

Մարդուս հոգեկան կարողութիւնները զարգացնելու համար հաւասարապէս հարկաւոր են հաճոյ եւ անհաճոյ առարկաներ։

Անձնիւ եւ պատուական իրերի վերայ մտածելը կեանքի մէջ երջանկութիւն է յաւէտ բերում, իսկ մեղսալից խորհուրդները՝ թշուառութիւն են ծնում։

Ամենափափուկ եւ ամենաազնիւ վրէժը ներողութիւնն է։

Երեք տեսակ տգիտութիւն կայ, ոչինչ իմանալ, չարաչար իմանալ եւ այլեմն իմանալ։

Առողջութիւնը դուստր է չափաւորութեան եւ աշխատութեան։

Բարիք կարողանալ եւ չանել, չարիք է։

Երբ առանձին է մարդս, պէտք է զգուշանայ իր խորհուրդներից,

ընտանիքի մէջ իր բնութիւնից եւ ընկերութեան մէջ իր խօսքերից։

Նա, որ ներսից անմեղ է՝ արտաքուստ զինուած է։

Մի դիւցազն պատերազմում մի բարեկամ կարիքների մէջ եւ մի հանճարեղ բարկութեան ժամանակ, —ահա երեք չքնաղ իրեր աշխարհիս վերայ։

Ստուճոյ երկրագործութիւնը եւ ծառայութիւնը մեր սեպհական եւ բնական փափագների եւ աշխարհային գաղափարների հետ կցելու եւ ներդաշնակաւորելու փորձը, առատ եւ կեղծ հոգեւորականութեան յատկանիշն է։

Չամեստութիւնը նման է թանձրախիտ ծառի, որ ծածկում է իր տերեւների տակ առատ պտուղները։

Լաւագոյն է ազնուամիտ լինել քան ազնուատոհմ։

Չատագոյն է այն ձեռքը, որ ընդունում է Ստուճոյին պարգեւներ,

Բազաքավարուեթիւնը մեծարանքի ամենաշքեղ ծաղիկն է։

Ճշմարիտ մեծուեթիւնը ոչ թէ զօրաւոր լինելու մէջն է, այլ զօրուեթիւնը ուղիղ գործածելու մէջ։

Նա է ամենամեծ մարդը, որի զօրուեթիւնը շատ սրաեր է բարձրացնում։

Աստուածը երկնքի ամբողջուեթիւնն է, իսկ սէրը մարդու։

Երանուեթիւն, դրամատ, երջանկուեթիւն եւ կեանք սիրոյ հեղուկի մէջն են լուծուած։

Ճշմարիտ գիտուեթիւնը եւ ճշմարիտ կրօնը մարդուս մէջ արտաշընչման եւ ներշնչման կարողուեթեան պէս են, մինը միւսից քաժանելը՝ երկուսին էլ ոչնչուեթիւն է։

Գիտուեթիւնը իսկապէս կարող է քաղքաջրել, որքան նա կրօնի հետ է, եւ կրօնը նոյնպէս կարող է քաղքաջրել, որքան խոր եւ անդրդուելի լինին նորա ուսումնական հիմունքը։

Խօսիլը արծաթ է, լսելը ոսկի։

Երբ պարզօրէն եւ հաւատարմաբար մինին ցոյց է տրւում իր վնասակար մի քայլը, ուղիղ ընթացքը խոստովանուելն է եւ նորանից հրաժարուելով իր քայլերին իմաստուն ուղղուեթիւն տալն է։

Ինչպէս արեւի ջերմուեթիւնը հալում է հեռուհետե ձիւնը եւ սառուցը, նոյնպէս եւ յամառ աշխատուեթիւնը հալեցնում է դժուարին եւ կնճռաւալի գործերը։

Ամեն մի գործի սկիզբը թվում է մթագին, իսկ վերջը պայծառ։

Գործօն կամքն է, որ կարող է ծնել յուսոյ կատարեալուեթիւն։

Հաւատք եւ գործք, երկոքին լծակից են, որ տանում են մարդուն երկինք եւ մտցնում մինչեւ Հօր Աստուծոյ գահը։

Տրամադիր եւ վրէժխնդիր լինել, միշտ եղիր ներողամիտ, որ կարողանաս յաղթել։

Նա է մարդուս ճշմարիտ եւ մե-

նայուն բարեկամը, որ ըստ հարկին դիտէ օգնել կարօտութեան մէջ եւ ուղղել թերութիւնները սրտի մօտ։

Դիւրագրգիռ մարդիկ երբէք գաղտնապահ չեն կարող լինել։

Երկայնակեաց լինելու համար երկու բան հարկաւոր է, բարոյականութիւն եւ չափաւորութիւն։

Աղքատը մի պատառ հացով հարուստ է, քան ագահ հարուստը, ուստի աղքատը մեծափառթամ է քան ագահ հարուստը։

Աշխատասէր թզուկը ծոյլ հսկայից աւելի արժէքը ունի։

Եղիր ուշիմ մինչ կոկոն ես, որ լինես պատուաստ երբ ծաղկես, եւ անհոգ ու անվիշտ երբ թարշամիս։

Երջանկութեան կանոնն է լինել չափաւոր յուսոյ եւ ակնկալութեան մէջ։

Մայրերը որորում են որբանում ոչ միայն իրենց զաւակները, այլ եւ աղդերի բաղդը։

Մաքուր կեանքը մի այնպիսի ձայն ունի, որ լսուում է երբ լուռ է լինում։

Կեանքի ձախորդութիւնները տալիս են յաճախ մարդուն արիութեան նոր թռիչք։

Անկեղծ սէրը երկնային է դաբձնում մարդուն։

Սէրն է բնութեան մեծագոյն գործին, հիւթ եւ շաղախ ընկերութեան եւ ոգին ու դարուները տիեղերքի։

Ազատութիւն չը կայ այն մարդկանց, որոնց կրքերը աւելի հզօր են քան կամքը։

Ազատաճաշունչը կեանքի համար մի պատուհան է, որի միջով նայում ենք յաւիտենականութեան։

Պատաւորութիւնը եւ այսօրը մերն են, ապրիլնքն ու ապագան Աստծուն։

Արդարութեան մէջ յապաղելը, արդարութիւն ուրանալ է։

Նախապաշարումները քանականութեան ամպերն են։

Գաշտապանել մի կարծիք, որովհետեւ մեր եւ կամ մեր բարեկա-

մինն է եւ ոչ թէ որովհետեւ ձըշմարիտ է, ոչ այլ ինչ է, եթէ ոչ մենք մեզ ճշմարտութիւնից դերադաս համարել։

Ոչ մի ազատախոհ մարդ չի կարող մեղադրել իր ընկերը կարծիքների տարբերութեան համար։

Անխոհեմ քաջութիւնը շատ անգամ վտանգավ է վարձատրվում։

Եթէ ուզում ես ամենքի առաջ պատկառելի լինել, վարուիր ամենքի հետ իրենց արժանիքի համեմատ։

Համբերութիւն եւ յարատեւութիւն իրենց մէջ այնպիսի մի զօրութիւն ունին, որ անհնարին գործերն անգամ հնարաւոր են դարձնում։

Եթէ ուզում ես իմաստուն լինել, շատ մտածիր եւ քիչ խօսիր։

Ուղղութեամբ ապրիր աշխարհիս վերայ, որովհետեւ որտեղ էլ լինիս Աստուած այնտեղ է։

Բարեկամութիւնը մի նեցուկ է փոթորիկների դէմ։

Առողջութիւնն է վիայադիր ապրկեշտութեան եւ չափաւորութեան։

Անշուշտ մեքենայ է անյոյս մարդը, խօսողի հայելին է խօսքը։

Եթէ յաջողակ է անկեղծ բարեկամդ, յաջող է գործդ։

Իրապէս մեծ լինել՝ փափագողը, Ջանալու է նախ իր վատ խղճմտանքի առաջ մեծ լինել։

Մոլութեան մի ցնցումով կեանքի ծառի բիւրաւոր ծաղիկներ են թափվում։

Ճշմարիտ ուսուցչի դասագիրքը իր վարքն ու գործն է՝ քան լեզուն եւ խօսքը։

Զարութեան փոխարէն բարութիւն անելը դիւցազնութիւն է։

Մարդս իր առաքինութիւնների համար կարող է Թշնամու վիայութեանը վստահիլ, իսկ իր մոլութիւնների համար բարեկամի վկայութեանը։

Բարեկարգութեան առաջին գործը պէտք է մարդս իր մէջից սկսէ։

Աստուած ունեցած հզօր հաւատքը ամենակարողութեան գործումներ է տալիս մարդուն։

Յոնատան եւ միանգամայն աշխատասէր մարդը երբէք անգործ չի մնալ։

Վատ խորհուրդները եւ գործերը ժանգոտում են խիղճը։

Գաղտնիքդ քոնին եւ գործդ ծոյլին չը տաս։

Աշխարհի վերայ բազմանքները վերջ եւ գոհացումները չափ չունին։

Անճնասէրի միակ բարեկամը իր եսն է։

Մի որ եւ է առաջ ճշմարիտ ցոյց տալու համար պէտք է մի շարք ստեր հնարել։

Քաջ է այն մարդը, որ որ եւ է մոլութեան անճնաւորուր երգած չէ։

Անդորրութիւնը երջանկութեան անսպասելի գանձարանն է։

Մարդս ամենափոքր բաներն մէջն է կազմում իր ապագան։

Փորձառութիւնը կեանքի ղեկն է։

Սէրը սիրող սրտի համար մի հոտաւէտ բոյր է։

Ամեն սէր ունեցող չի կարող սէր գործածել, պահէ սէրը եւ կնայրես։

Մի ջանար դատել մէկը քո կատարողութեանդ համեմատ, այլ դատէ նորան իւր կարողութեան չափով։

Այն մարդը, որ դատարկ եւ անգործ մնալուն սպասում է մեծ գործ գտնել, միշտ անգործ կը մնայ։

Կեանքը առանց յոյսի հանդարծ պատրոյկ է։

Երգը հոգեկան զգացմունքների արտայայտութիւնն է։

Սիրոյ առաջ ատելութիւնը եւ նախանձը ծնրադրում են։

Պահանջկոտ աչքի պատրնկ վերայ մոռածիր։

Գործած չարութեան դէմ ամենից առաջ խեղճն է զղջում։

Խղճի խայթը մահացու ախտի նման քայքայում է կեանքը։

Երկրին տառապանաց ճշմարիտ վկան արտասուքն է։

Կեղծաւոր մարդու սիրտը պղտոր ջրի նման է, որի յատակը չի տեսնվում։

Ընեցածդ վայելելու համար կծծի մի լինիր եւ ունեցածդ չը կորցնելու համար շռայլ մի լինիր։

Ամենից մեծ չարիքն է չունենալ բարեկամ։

Չարասուբեհան գլխաւոր գաղտնիքներն են՝ անտեսագիտութիւն, հեռատեսութիւն եւ անդուլ աշխատասիրութիւն ուղիղ գործունէութեամբ։

Սիրիր այն մարդը եւ վստահիր նորա բարեկամութեանը, որ յանցանքդ կամ սխալդ երեսիդ է խօսում, եւ ոչ նրանց մօտ առաքինութեանդ եւ համեստութեանդ վերայ։

Դիւրին է պատիւը կորցնել, բայց շատ դժուար է այն ձեռք բերելը։

Անկեղծ բարեկամութիւնը ուրախութեան եւ երջանկութեան ե-դեմն է։

Անկեղծ բարեկամութեան սկիզբը անձի եւ եսի նուաստութիւնն է, անձնասէրը չի կարող անկեղծ բարեկամ լինել։

Կեանքի ամբիծ շուշանը բարեկամութեան մէջն է ծլում եւ ծաղկում։

Բարեկամութեան մէջ ամեն բան քաղցրաբոյր վարդերի է նմանում։

Յարեկամութիւնը ծաղկապսակ մի բուրաստան է, ուր սէր է հոսում եւ կեանքը քաղցրանում։

Անկեղծ բարեկամը հանդուրժ սրտի կայծն է։

Մի բարեկամ շահիլ իր համար խորհող եւ հոգացող պատրաստել է։

Սէրը համեմած կերակուր է, որը ճաշակելով ճաշակելով ոչ ոք չի կարող յագենալ։

Ճշմարիտ սէրը անկեղծ բարեկամութիւն է։

Կուզես ճանաչել անձդ, քայլերդ դիտիր եւ սրտիդ ուզածներին նայիր։

Աչքերի լուիկ պերճախօսութիւնը հզօր է քան բերանինը։

Անուշ նայուածքը մոգում է, քաղցր ժպիտը դիլթում է, ոսկի լեզուն ոգեւորում է։—Նայուածք, ժպիտ եւ խօսք, մարդուս երեք շնորհալի պարգեւներն են։

Ցոռեռտես մարդը ապերջանիկ է։

Վատ է խօսում միշտ այն անձը, որ վատ է մտածում։

Խոնարհ հոգին սիրով է անանուն, իսկ հպարտը՝ առեւտրեամբ։

Առեւտրեան առաջ կործանման փող է հնչում։

Անուշ եւ ծոյլ մարդիկ անպտուղ ծառերի նման են, որ օգտակար ոչինչ ունին արտադրելու։

Անձնուիրութեան ալէյումը՝ հշմարիտ սիրոյ եւ բարեկամութեան հաւաստիքն է։

Անմեռափրը սխալներից զգուշացողը, ապահով [պէտք է լինի մեծաւոր սխալների մէջ ընկնելուց։

Անձնասէրի համար մոերմութիւն քաւը նշանակութիւն չունի, որով-

հետեւ մոերմութիւնը անձնուիրութիւն է պահանջում։

Չարուստի բարեկամը շատ անգամ աւելի կեղծ է՝ քան աղքատինը։

Անչոց թերութիւնները մատնանիշ անելու եւ այլայլանելու փոխանակ, միշտ խորհիր, գտիր եւ ուղղիր քո թերութիւններդ, որպէս զի ուրիշներն էլ քո թերութիւններդ մատնանիշ անելով չայլայլանեն քեզ։

Սէրը՝ սրտի, բարութիւնը՝ հոգւոյ, դիտութիւնը՝ մտքի ամենալոյսաւոր եւ թանկագին զարդերն են։

Մեծն Նապօլէօն սովոր էր ասել, «անկարելին» այնպիսի մի բառ է, որ միայն ծոյլերի բառարանի մէջն է գտնվում։

Մարդս հաճութեամբ է ընդունում անիրաւ գովեստ եւ տհաճութեամբ մերժում է արդար յանդիմանութիւն։

Ազատութիւն կան դերութեան շղթաների մէջ (Գործ. ԺԶ. 25.)։

Գեղջկներ կան վիհամոլական գահերի վերայ (Գ. Թագ. Իվ. 4.)։

Կեանքը մերթ ծանրագոյն է քան պլեատան Չիմալայեան եւ մերթ թեթեւ է եւ հաճելի իբրեւ զպատմուճան ծաղկեայ։

Գահ կայ որ արտասուքով է ողողվում, բանդ կայ, որ երգերով է լեցվում։

Երկիւղը ծով է առեղծում ցամաքի վերայ, իսկ հաւատքը՝ ծովը ցամաքի է փոխում։

Լաւ է մէկ ոսկի, քան մէկ միլիոն բարեկամ։

Լաւ է մէկ բարեկամ, քան մէկ միլիոն ոսկի։—

Քանի՛ քանի՛ անգամ երջանկութեան աղբիւրը եւ պատճառ են եղել այն բաները, որ մենք դժբաղդութիւն ենք համարել։

Իմաստուն մարդը դոլիճաճ յանցանքի համար չի պատժիլ, այլ գաւիք չարիքի առաջն առնելու համար։

Դժբաղդութիւնը այնքան կարեւորութիւն կունենայ, որքան կարեւորութիւն տանք նորան։

Պարտքի կանոնը շատ աւելի ընդարձակ է իրաւունքի կանոնից։

Իմաստունը ոչ յաջողութիւններից է ներգործվում եւ ոչ էլ դժբաղդութիւններից ընկճվում։

Դժբաղդութիւնը մի առիթ է, որով առաքինութիւնը կարող է զարգանալ։

Ճշմարիտ ազնուութեան էութիւնը անձնուիրութեան մէջն է։

Եթէ չը կայ մի գործ եւ մի ընկերութեան մէջ անձնուիրութեան խորհուրդ, չը կայ նոցա մէջ գերազնիւութիւն։

Ամենքին բարիք չենք կարող անել, բայց կարող ենք ամենքին բարեացակամ լինել։

Սիրոյ թափած արցունքները մաքրողական զօրութիւն ունին։

Ձարատեւող բնաւորութիւնը յա-

ջողուվրեան գաղանիքն է։

Մեկ գործը հաղար խօսքից աւելի արժէքը ունի։

Յորդահոս ջրերը չեն կարող շինջուրացանել սիրոյ տենչը։

Տրամադիր եղիր լքանել կարծիքդ եւ փոխել քայլերդ, երբ մտերիմ բարեկամդ խորհուրդ է տալիս քեզ իրաւացի պատճառներով։

Գայլը էուվրեանց ներքին կողմը, որովհետեւ քո մէջդ ունիս այնպիսի երջանկութեան մի աղբիւր, որ միշտ պէտք է ճոխանայ այն, եթէ պուճ միայն հոգատար լինես նորան։

Ոչ մէկ բան չի կարող մեծ լինել, որ չէ ուղիղ։

Ով որ դիտում է իր անձի տկարութիւնը, ուրիշների տկարութիւնը ներելու յօժար կը լինի։

Այն բծերը, որ տեսնում ենք ուրիշների վերայ եւ դատափետում անխղճօրէն, դրեթէ յոռեալս մեր անձի հայելիներն են։

Որտի մէջ եղած դեղեցկութիւնը մարդուս դէմքից է երեւում։

Ինչ բան որ կուզենք տեսնել ուրիշների մէջ, պէտք է առաջ ուենենանք մեր մէջ։

Մարդուս իրական գործունեութիւնը իր բարքի եւ վարքի մէջն է եւ ոչ թէ իր պարագաների։

Մարդս գործաւոր է ոչ թէ իր ունեցածովը, այլ իր եղածովը։

Օրինաւոր աւելի գործաւոր եւ ազդեցիկ կը լինի, որքան աւելի բարձրից լինի։

Լաւ է դիտութիւն առանց հարբուտութեան, քան հարբուտութիւն առանց դիտութեան, առաւել լաւ է առողջութիւն առանց դիտութեան եւ հարբուտութեան, քան դիտութիւն եւ հարբուտութիւն առանց առողջութեան։

Ոսուսմն առանց բարի գործի նման է բազմաճիւղ անարմատ ծառի, որին մի թեթեւ քամին անգամ տապալում է։

Նախկին փիլիսոփաները սովոր էին բաղդատել մարդկային կրքերը վայրի ճիւս հետ եւ մարդու խելքը կառավարի հետ, որի պաշտօնն է ուղղել եւ կառավարել նոցա ըստ հաճոյից։

ՓԼՓԼԷՐ ԱՍՏՂԱԲԱՇԽԻ ԱՂՕԹՔԸ։

Փէփլէրը մի գիրք է հրատարակել «Ընդհանրական աշխարհի» վերնագրով. եւ գիրքը աւարտում է հետեւեալ աղօթքով, որով փայլում է առաւել անկեղծ եւ ջերմ Աստուածապաշտքան շատ նշանաւոր Աստուածաբաններ։

«Դու ար բնութեան լուսովդ մեր մէջ վառեցիր Քո շնորհաց լուսոյ բաղձանքը, որպէս զի բարձրացնես մեզ դէպի Քո փառքի լոյսը, փառք քեզ, Արարիչ եւ Ցէր, որ թոյլ ես տալիս ինձ ցնծալ Քո գործերով։ Ահա կատարեցի կեանքիս գործը

մարթիս այն զօրութեամբ, որը Դու ես պարգեւել ինձ. ես պատմեցի մարդկանց Քո գործերի փառքը, որքան իմ միտքս կարող էր ըմբռնել նոցա անհուն վերափառութիւնը, իմ զգայարանքները արթուն էին ի խնդիր հետազօտութեան իմում մարթութեամբ եւ հաւատարմութեամբ։ Եթէ ես, որ մի որդ եմ Քո աչքումդ եւ մեղքի կապանքների մէջ ծնուած մի մահկանացու, մի քան յառաջ եմ բերել, որ անարժան է Քո խորհուրդներին, ներշնչիր ինձ Քո հոգեւովդ, որ կարողանամ ուղղել սխալներս, եթէ Քո գործերի զարմանալի գիտցկութեամբ առաջնորդուել եմ յանդգնութեամբ եւ իմ պատիւս եմ փնտռել մարդկանց մէջ, մինչ յառաջանում էի այն գործի մէջ, որ սահմանուած էր ի պատիւ եւ ի փառս Քո. ներիր ինձ Քո անսահման ողորմութեամբդ եւ անհուն սիրովդ եւ Քո

շնորհքով շնորհիր, որ իմ վարդապետութիւնը լինի ի փառս քո եւ ի բարօրութիւն մարդկան։ Գովեցէք Դուք զՏէր. ով երկնային նորդաշնակութիւններ. եւ Դուք որ, ալէտք է հասկանաք այս նոր նորդաշնակութիւնս գովեցէք զՏէր, Գովեան զՏէր, ով անձն իմ, որչափ որ ալէտք է ապրեմ, որովհետեւ ընդանից է, ընդանող է եւ ընդա համան է ամեն ինչ. թէ նիւթական եւ թէ հոգեւոր, ամեն ինչ, ինչ որ դեռ չենք ճանաչել, որովհետեւ դեռ շատ բան կայ, որ լուսաբանուած չէ։»

Այս աղօթքը գրող Քէվլէրը աստղաբաշխը հալածվում էր եկեղեցու հետեւողոս իր ժամանակի աստուածաբաններից։

«Տէր. Տէր մեր, զի սքանչելի է անուն քո ի վերայ ամենայն երկրի»

«Երանի ժողովրդեան, որը գիտէ զօրհնութիւնս քո Տէր»


059
0-83

ания

4
5427
2013
<< Ազգային գրադարան
NL0032224